Azg
Armenian daily

8 ՅՈՒԼԻՍ 1997, ԵՐԵՔՇԱԲԹԻ # 126 (1380)

Թուրքմենիան վճռական բողոք հայտնեց Ռուսաստանին ու Ադրբեջանին

7 ՀՈՒԼԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Թուրքմենիան վճռական բողոք հայտնեց կասպյան նավթի շուրջ Ադրբեջանի եւ ռուսաստանյան ԼՈՒԿՈՅԼ նավթային ընկերության միջեւ նախորդ շաբաթ ստորագրված 2 միլիարդ դոլար արժողությամբ պայմանագրի առնչությամբ: Թուրքմենիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց, որ պայմանագիրը մասնավորաբար ներառում է նավթով հարուստ այնպիսի տարածքներ, որոնք վիճահարույց տարածքներ են Ադրբեջանի եւ Թուրքմենիայի միջեւ: Թուրքմենական «Նեյտրալնի Թուրքմենստան» օրաթերթն այսօր հրապարակեց արտգործնախարարության հայտարարությունը, որտեղ նշվում է, որ Թուրքմենիան պահանջում է չեղյալ հայտարարել ստորագրված պայմանագիրը: Նախարարությունն իր դժգոհությունն է արտահայտել պայմանագրի ստորագրման առթիվ եւ նախազգուշացրել ադրբեջանցիներին եւ ռուսաստանցիներին որեւէ քայլ չձեռնարկել պայմանագիրը գործադրելու ուղղությամբ, քանի դեռ տարածքների պատկանելիության եւ կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին խնդիրները կարգավորված չեն: Նախարարությունը նշել է նաեւ, որ պատշաճ բողոք կներկայացնի: Հիշեցնենք, որ ռուսաստանյան ԼՈՒԿՈՅԼ եւ ադրբեջանական պետական «Սոկար» նավթային ընկերությունները պայմանագիրը ստորագրեցին հուլիսի 4-ին:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑ

ԵԱՀԿ-ը պատշտանում է Ստալինի որոշումը

Բուրժուական հավատարմություն բոլշեւիկյան սկզբունքների՞ն

ՎԱՀԵՔ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ղարաբաղյան իրադարձությունների առաջին իսկ տարիներին միջազգային ընկերակցությունն ի դեմս հեղինակավոր կազմակերպությունների ու ԵԱՀԿ տարբեր անդամ երկրների օրենսդիր մարմինների, պատրաստակամություն էր ցուցաբերում արցախահայության ազատագրական շարժմանը օբյեկտիվ գնահատական տալու եւ ընդունելու ժողովրդավարության ոգուն համապատասխան որոշումներ՝ ի նպաստ ԼՂ ժողովրդի արդար պահանջատիրության իրականացման: Հավանաբար բոլորն են հիշում ԱՄՆ Սենատի 1991-ի մայիսի 17-ի որոշումը, որն ընդունվել է սենատորներ Քենեդիի, Վիկոնջինիի, Դոուլի, Լեւինի, Սայմոնի, Քեսոնի, Ուորների, Ռիգերի, Փրեսլերի, Սփեքտորի, Բելլի եւ Սարբանեսի առաջարկությամբ: Որոշման մեջ իր մտահոգությունը հայտնելով խորհրդային եւ ադրբեջանական զորքերի կողմից ԼՂ հայկական գյուղերի ոչնչացման եւ հայ բնակչության զանգվածային տեղահանության կապակցությամբ, Միացյալ Նահանգները դատապարտել է զինուժի լայնածավալ գործածումը եւ հայկական բնակավայրերում անմեղ մարդկանց վրա չդադարող հարձակումները, ԱՄՆ Սենատը կոչ էր անում վերջ տալ շրջափակումներին եւ ԼՂՀ ու ՀՀ ահաբեկմանը, ինչպես նաեւ ուժի գործադրման այլ ձեւերին: Ամենաուշագրավը սակայն Սենատի որոշման 5-րդ կետն է, ըստ որի ԱՄՆ-ը հաստատում է իր հավատարմությունը ժողովրդավարությանը եւ ազգային ինքնորոշմանը ԽՍՀՄ հանրապետություններում եւ իր խորին անհանգստությունն է արտահայտում խորհրդային որեւէ գործունեության համար, որի նպատակն է պատժել, ճնշել կամ ահաբեկել իրենց խաղաղական նկրտումների իրականացման ճամփան ընտրած ԽՍՀՄ հանրապետություններին ու տարածաշրջաններին:

Տես էջ 2

Հայեր, միացե՛ք

Հուլիսի 6-7-ը հայ մտավորականության խմբի եւ ԼՂՀ իշխանությունների նախաձեռնությամբ Ստեփանակերտում Հայաստանի քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց խորհրդակցություն Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված միասնական դիրքորոշում մշակելու նպատակով:

Բացելով խորհրդաժողովը, ԼՂՀ ղեկավար Լեոնարդ Պետրոսյանն իր ելույթագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր արձագանքեցին Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու համար ուժերը համախմբելու կոչին: Նա նշեց այս համաժողովի կարեւորությունը հանրապետության հետագա ճակատագրի համար, ընդգծելով Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի եւ Սփյուռքի հեռ համագործակցության եւ ջանքերի համախմբման անհրաժեշտությունը:

Երկօրյա քննարկումների ընթացքում, որն անցավ փակ դռների հետեւում, կլոր սեղանի մասնակիցների միջեւ տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն ԼՂՀ պետականության պաշտպանության գործում հայ քաղաքական կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների գործունեության ուղղությունները ճշտելու նպատակով:

Խորհրդակցության մասնակիցներն ընդունեցին համատեղ հայտարարություն, որը նույնպես բովանդակում է Հայաստանի եւ Սփյուռքի քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների այս հայտարարությանը միանալու կոչ: Ամփոփելով կլոր սեղանի արդյունքները, Լեոնարդ Պետրոսյանը համաժողովն անվանեց հայ ժողովրդի բոլոր ուժերի համախմբման առաջին քայլ եւ հույս հայտնեց, որ հետագայում այդ գործընթացն էլ ավելի կզարգանա, կխորանա վասն համազգային խնդիրների լուծման:

Վ. Ա.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԱՄՈՒԼ

«Վաշինգտոն փոստը» հրապարակում է ադրբեջանական նավթով հրապուրված ԱՄՆ նախկին պաշտոնյաների անունները

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍ: «Վաշինգտոն փոստ» թերթի թղթակիցներ Դեյվիդ Հոքվայթ եւ Ջոն Մորգանն այսօր համատեղ հրապարակումով անդրադարձել են ադրբեջանական նավթի արդյունահանման գործում եւ Միացյալ Նահանգներ-Ադրբեջան փոխհարաբերություններում ամերիկացի մի շարք ազդեցիկ անձնավորությունների դերին: Ինչպես իր մեկնաբանության մեջ ընդգծել է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության տնօրեն Մարտ Սողոմյանը, Կասպից ծովի նավթային հսկա հարստությունը շահագրգռել է ամերիկացի հանրաճանաչ մի խումբ մարդկանց, որոնք ձգտում են մեծ շահ ստանալ թե իրենց, եւ թե իրենց մի շարք ընկերությունների համար: Այս անձինք դաստակում են տարբեր կուսակցությունների եւ անցյալում ծառայել են տարբեր վարչակազմերում, բայց ներկայումս նրանք համագործակցում են ձգտելով փոխել Միացյալ Նահանգների այն օրենսդրությունը, որը սահմանափակում է ներդրումներն Ադրբեջանում: «Վաշինգտոն փոստի» հոդվածում նշված անունների ցուցակն, իսկապես, տպավորիչ է. ազգային անվտանգության նախկին խորհրդականներ Բրենտ Սքոուքրոֆթ եւ Զբիգնեւ Բժեզինսկի, մեկը՝ հանրապետական, մյուսը՝ դեմոկրատ. Սոլիտակ տան անձնակազմի նախկին ղեկավար Ջոն Սյունունու, պաշտպանության նախկին նախարար Ռիչարդ Չեյնի եւ նույն կին արտգործնախարար Ջեյմս Բեյքեր. ինչպես նաեւ Քլինտոնի վարչակազմի ֆինանսների նախկին նախարար Լոյդ Բենսթոն: Թերթն ավելացնում է, որ այս բարձրաստիճան քաղաքական գործիչների դերակատարությունը պատճառ է դարձել, որ Վաշինգտոնում լոբբիստական պայքարը ավելի մեծ թափ ու ծավալ ստանա: Ամերիկյան նավթային ընկերությունները հույս ունեն, որ Ադրբեջանին ամերիկյան ռազմական օժանդակության դեմ կիրառված սահմանափակումները մեղմացնելով՝ կկարողանան իրենց ծրագրերի համար ստանալ պետական երաշխավորություններ՝ մոտ մեկ տասն 92 թվականին, երբ ԱՄՆ-ի Կոնգրեսը համապատասխան օրենք ընդունեց, որպես բողոք-պատժամիջոց Ադրբեջանի կողմից Հայաստանը շրջափակման ենթարկելու քաղաքականության դեմ:

Տես էջ 2

Շարունակվում է հեռուստառադիո համակարգի «վերակառուցումը»

«ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության պետ Գարեգին Չուգասզյանի հրամանով մեկնարկեց ՀՀ հեռուստառադիո համակարգի վերակառուցումը: Ըստ այդմ՝ Հայաստանի պետական հեռուստառադիոընկերությունը վերակազմավորվել է եւ բաժանվել 3 անկախ միավորների. Հայաստանի ազգային հեռուստատեսություն, «Նորք» հեռուստաընկերություն եւ «Երեւան» ստուդիա: Իր հերթին, Հայաստանի ռադիոընկերությունը վերակազմավորվել է 2 մասի՝ Հայաստանի ազգային ռադիո եւ «Տերյան» ստուդիա: Գյումրիի «Շիրակ» հեռուստառադիովարչությունը վերանվանվել է «Շիրակ» հեռուստաընկերություն:

Նույն օրը իրենց դիմումի համաձայն աշխատանքից ազատվել են Հայաստանի պետական հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Պետրոս Ստեփանյանը եւ Հայաստանի պետական ռադիոընկերության տնօրենի պաշտոնակատար Էդվարդ Միլիտոնյանը:

Հայաստանի ազգային հեռուստատեսության գլխավոր տնօրեն է նշանակվել Համլետ Գասպարյանը. Հայաստանի ազգային ռադիոյի գլխավոր տնօրեն Արմեն Ամիրյանը, իսկ «Երեւան» ստուդիան կգլխավորի Տիգրան Խզմալյանը:

Շեւարդնաձեն գոհ մնաց Բերեզովսկու անցյալ շաբաթվա այցից

7 ՀՈՒԼԻՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն բարձր գնահատեց աբխազական հակամարտության կարգավորման խնդիրը փակուղուց հանելու ուղղությամբ տարվող ռուսաստանյան միջնորդների ջանքերը: Վրացական ռադիոյին տված հարցազրույցում Շեւարդնաձեն նշեց, որ Ռուսաստանի անվտանգության խորհրդի փոխքարտուղար Բորիս Բերեզովսկու նախորդ շաբաթվա այցը Վրաստան շատ արդյունավետ եւ հետաքրքիր էր: Շեւարդնաձեն ասաց, որ ռուսաստանյան խաղաղապահների համար աբխազական հակամարտության կարգավորման ամենակարճ ուղին ավելի խորը տեղաշարժն է դեպի Աբխազիայի տարածքի ներսը՝ ինչպես որ կոչ արեցին ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարները մարտին հրավիրված գագաթաժողովի ժամանակ: Շեւարդնաձեն հայտարարեց, որ ռուսաստանյան զորամիավորումները պետք է սատարեն շուրջ 250 հազար վրացի փախստականների վերադարձը Աբխազիա: Հիշեցնենք, որ ռուսաստանյան խաղաղապահները վրացիների ու աբխազների միջեւ տեղաբաշխվել են 1994 թվականի հուլիսին:

ՄԱԳՐԻԲ

ՆԱՏՕ-ի գագաթաժողովի նախօրեին վեճերը դեռ չեն հարթվել

7 ՀՈՒԼԻՍ, BBC, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Իսպանիայի թագավորի եւ թագուհու հետ Մալյորկա կղզում անցկացած 2 հանգստի օրվանից հետո ԱՄՆ-ի նախագահ Քլինթոնն այսօր ժամանեց Մադրիդ, որտեղ օրվա երկրորդ կեսին կհանդիպի ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարին՝ քննարկելու հյուսիսատլանտյան դաշինքի ընդլայնման հետ կապված վեճը: Վաղը կսկսվի ՆԱՏՕ-ի երկրների 2-օրյա գագաթաժողովը, որի ընթացքում Չեխիան, Լեհաստանը եւ Հունգարիան, ինչպես սպասվում է, կընդգրկվեն ՆԱՏՕ-ի կազմում: Հունիսին նախագահ Քլինթոնը հայտարարել էր, որ այս փուլում պետք է բավարարվել միայն 3 երկրների ՆԱՏՕ-ի կազմ ընդունելով: Սակայն ՆԱՏՕ-ի անդամ 9 երկրներ՝ Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Կանադան, Հունաստանը, Պորտուգալիան, Իսպանիան եւ Թուրքիան պնդում են, որ ՆԱՏՕ-ի կազմում անհրաժեշտ է ընդգրկել նաեւ Ռումինիային եւ Սլովենիային: Իտալիայի վարչապետ Պրոդին հայտարարեց, թե ինքը կոչի Քլինթոնին փոխելու կարծիքը: Ամերիկյան կառավարությունը հայտարարում է, որ ՆԱՏՕ-ի ընդլայնման առաջին փուլը կարժենա 27-35 միլիարդ դոլար, ընդ որում Վաշինգտոնը առաջիկա 12 տարիների ընթացքում պետք է մուծի ոչ ավելի, քան 2 մլրդ դոլար: Սակայն Քլինթոնի վարչակարգի հակառակորդները պնդում են, որ այդ գնահատականը խիստ նվազեցված է: Գերմանիայի դիրքորոշումն այս հարցում դեռեւս անորոշ է: Այս երկիրը ցանկանում է կայունության գոտի ստեղծել իր արեւելյան սահմաններում: Կանցլեր Քոլը Ռումինիայի նախագահին երեկ Բոնում ասաց, թե հասկանում եւ աջակցում է Ռումինիայի ձգտումը ընդգրկվել ՆԱՏՕ-ի կազմում: Սակայն, ինչպես կվերակի Բոնը այս հարցի կապակցությամբ, դեռեւս անհայտ է: Վերջին պահին Հունգարիան է դիմում ներկայացրել ՆԱՏՕ-ի մադրիդյան գագաթաժողովին՝ դաշինքի ընդլայնման առաջին փուլում Ռումինիային եւ Սլովենիային ընդգրկելու առաջարկով:

Մարսի վրա ջուր է եղել

7 ՀՈՒԼԻՍ, RFI: «Սա այնքան հիասքանչ է, որ դժվար է հավատալ», հայտարարեց ամերիկյան հռչակավոր ֆանտաստ գրող Արթուր Քլարկը, երբ տեսավ Մարս մոլորակի մակերեւույթի առաջին լուսանկարները, որոնք ստացվել էին «Փաթֆայնդեր» տիեզերանավից: «2001 թվականի տիեզերական ոդիսականի» եւ բազմաթիվ այլ, մասնավորապես Մարսի գաղութացման մասին ֆանտաստիկ երկերի հեղինակը խանդավառությամբ արձագանքեց Մարսի վրա բակտերիաների գոյության հնարավորության մասին ամերիկյան տիեզերանավից վերջերս երկիր հաղորդած ինֆորմացիային: Իսկ երեկ Մարսի վրա իր անիվների հետքերը թողեց մարսագնաց «Ռոմին», որը հետազոտեց Մարսի բնահողը «Փաթֆայնդերի» վայրէջքի վայրում: Ըստ ՆԱՍԱ-ի մասնագետների, առաջին իսկ վերցված նմուշները հնարավորություն են տալիս պնդելու, որ Մարսի վրա անցյալում ջուր է եղել: Իսկ «Նյուզուիք» շաբաթաթերթը հայտնեց, որ ՆԱՍԱ-ն այժմ ծրագրում է Մարս ուղարկել անձնակազմի կողմից ղեկավարվող տիեզերանավ:

ԱԶԳ

ՊՈՐԹԱԳԻԿ

ԴԱՐԱԲԱԳԻՐ ՀԱՐՑ

ԵԱՀԿ-ը պաշտպանում է Ստալինի որոշումը

Սկիզբը էջ 1

Բոլորիս հայտնի են նաեւ արցախահայության ինքնորոշման պաշտպանությանն ուղղված Եվրախորհրդարանի բազմաթիվ որոշումները, բանաձեւերը, կոչերն ու ուղերձները: Արդարամիտ Եվրոպայի դիվանագետները այնքան բնորոշ նրբազգացությամբ ժողովրդավարական առաջ արցունքներ էին թափում տոտալիտար ԽՍՀՄ-ում հայերի իրավունքների ոտնահարման կապակցությամբ: Մերկացնում էին Ստալինի խաղախականությունը, ժողովուրդների դեմ նրա բռնարարքները, կրքոտ ելույթներ էին ունենում ժնեւյան կոնվենցիաներ թափահարելով, իրավաբաշտպան հանձնաժողովներ էին ուղարկում տարածաշրջան: Հայությունն այն օրերին ցնցված էր, հայությունը հիացած էր արեւմտյան ժողովրդավարության ազնվագույն պոռթկումներից:

Իսկ հիմա իրադրությունը կտրուկ փոխվել է: ԽՍՀՄ-ը վերջապես կազմալուծվեց եւ կոմունիստական ռեժիմի անօրինական որոշումները մերկացնող արեւմտյան դիվանագետներն այսօր պաշտպանում են նույն ռեժիմի որոշումը ԼՂՀ ինքնավարության մասին: Անհասկանալի է, ԵԱՀԿ ղեկավարությունը դասապարտո՞ւմ է ստալինյան որոշումները, թե՞ պաշտպանում դրանք: Եթե դասապարտում է, ապա ինչպես մեկնաբանել Լիսաբոնի կազմակերպած պուֆֆոնադան: Եթե պաշտպանում է, ապա ում համար է գրված ՄԱԿ-ի կանոնադրությունը, որի երկրորդ կետի համաձայն «ՄԱԿ-ը չի երաշխավորում պետությունների տարածքային ամբողջականությունը, այն դեպքերում, երբ տարածքային փոփոխությունները տեղի են ունենում տվյալ տարածքում ապրող ժողովուրդների կամքի արտահայտությանը համապատասխան»:

Ո՞ւմ համար է ընդունված ՄԱԿ-ի 1970 թ. բանաձեւը, ըստ որի «միջազգային իրավունքի պաշտպանության տակ է գտնվում միայն այն պետությունների տարածքային ամբողջականությունը, որոնք ճանաչում են իրենց կազմում գտնվող ժողովուրդների եւ ազգային փոքրամասնությունների ինքնորոշման իրավունքը»: Ո՞վ պետք է ղեկավարվի ԵԱՀԿ 1977 թ. հելսինկյան եզրափակիչ ակտի դրույթներով, որտեղ ընդգծված է ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմնարար բնույթը: Ի՞նչ գրավյալ տարածքների մասին է խոսքը, երբ գոյություն ունի ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, որի համաձայն զինված հարձակման ենթարկված ժողովուրդը իրավունք ունի մարտական գործողությունները տեղափոխել հակառակորդի տարածք: Ինչպե՞ս կարելի է պնդել Ադրբեջանի ամբողջականության մասին, եթե նույն ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն տարածքային ամբողջականության սկզբունքը առնչվում է միմիայն միջպետական, այլ ոչ թե ներքին պետական հարաբերությունների բնագավառին: Ինչպե՞ս կարող է ժողովրդի մի մասը միջազգային իրավունքի սուբյեկտ լինել, իսկ մյուսը՝ ոչ:

Թվում է, թե ԵԱՀԿ ղեկավարությանը նման հարցադրումներով պետք է դիմեն ոչ թե լրագրողները, այլ համապատասխան գերատեսչությունների համապատասխան պաշտոնատար անձինք՝ օգտագործելով առաջինների քարոզչական ներուժը: Երբ ժողովրդի պատմական ճակատագիրն է որոշվում, լռությունը հավասարազոր է մեղսակցության: Ժողովուրդը համենայնդեպս գործ է պահանջում:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍԱՄՈՒԼ

«Վաշինգտոն փոստը» հրապարակում է...

Սկիզբը էջ 1

Ամերիկյան նավթային ընկերությունների բարձրաստիճան պաշտոնյաներ թերին հայտնել են, որ ադրբեջանցիները նրբորեն տպաստանցել են, որ եթե Միացյալ Նահանգները չեղյալ չհայտարարի այդ սահմանափակումները, Բաքուն կարող է նախապատվությունը տալ ոչ ամերիկյան ընկերություններին: Այս պաշտոնյաները փաստարկում են, որ, օրինակ, եթե ԱՄՆ-ը չեղյալ չհայտարարի Ադրբեջանի դեմ կիրառված սահմանափակումները, եվրոպական նավթային ընկերությունները որոշակի առավելություն ձեռք կբերեն Կասպից ծովի նավթի արդյունահանման ծրագրում: «Վաշինգտոն փոստը» շարունակում է, թե սառը պատերազմի վերերան նախկին պաշտոնյաների համար Ադրբեջանի նավթը յուրահատուկ առիթ է ստեղծել, մի կողմից նրանք ձգտում են նպաստել որոշեսզի խորհրդային նախկին հանրապետությունն ամրակայի իր անկախությունը Մոսկվայից, մյուս կողմից էլ՝ առիթ է անձնական նյութական մեծ շահ աղահովելու համար: Այսպես, օրինակ, ազգային անվտանգության նախկին խորհրդական Բրենթ Քրոֆթը 100 հազար դոլար է ստացել Պենզոյլ նավթային ընկերությունից՝ միջազգային հատուկ ծրագրերում խորհրդատվական ծառայություններ մատուցելու համար: Նա «Վաշինգտոն փոստին» տված հարցազրույցում հաստատել է գումարներ ստանալու մասին այս տեղեկությունը եւ նշել, որ մասնակցությունն այս ծրագրին նաեւ բխում է տարածաշրջանի նկատմամբ իր ունեցած ավելի լայն հետաքրքրությունից: «Հարցը միայն Պենզոյլ ընկերության շահերը չեն: Ես Ադրբեջանի մեծ պաշտպանն եմ, քանի որ Միացյալ Նահանգները այնտեղ արմատական շահեր ունի: Դա մի հսկայական նավթային հարստություն է: Ժամանակն է, որ մենք արթնանանք», ասել է նա: Նախագահ Հեյդար Ալիեւի Վաշինգտոն կատարելիք առաջիկա այցի ընթացքում պաշտպանում է, որ Ադրբեջանի հետ մեծ պայմանագիր կնքի Ռեյգանի Սպիտակ տան անձնակազմի ղեկավար Ջոն Սյունունի լոբբիստական ընկերությունը: «Նա վերջերս Ադրբեջան այցելեց եւ իր վերադարձից հետո ելույթ ունեցավ Ադրբեջանի վարչապետի՝ Վաշինգտոն կատարած այցի առթիվ կազմակերպված ճաշկերույթի ժամանակ: Այնտեղ Սյունունուն շեշտեց Ադրբեջանի ռազմագիտական կարեւորությունը, որ մի քանի հարյուր ամերիկացի գործարարներ խավիար էին ընտրում», գրում է «Վաշինգտոն փոստը», ավելացնելով, թե նախկին բարձրաստիճան պաշտոնյաներից բացի կա նաեւ ավելի կրտսեր նախկին պաշտոնյաների մի փոքրիկ բանակ, որը դարձյալ լծված է Ադրբեջանի օգտին լոբբիստական աշխատանքներին: Թերը նկարագրելով Վաշինգտոնում բնժացած դայլարը Ադրբեջանի եւ Հայաստանի աջակիցների միջեւ, այնուամենայնիվ եզրակացնում է, որ հայկական լոբբիի նախկին մեծությունն այդ հարցում բարձրացած է: «Ամերիկյան նավթային ընկերությունները Ամոկո-ի եւ Պենզոյլի ղեկավարությամբ զորակոչել են իրենց ուժերը՝ Կոնգրեսում բացատրելու ադրբեջանական նավթի կարեւորությունը: Քլինթոնի վարչակազմն էլ իր հերթին առաջ է քաշում Ադրբեջանի նկատմամբ կիրառված սահմանափակումներին վերջ տալու խնդիրը: Ադրբեջանի նկատմամբ վարչակազմի բարենպաստ քաղաքականության ազդանշաններից մեկն էլ Ալիեւին ուղղված հրավերն է: Հայերն, այնուամենայնիվ, լծվել են աշխատանքի՝ 50 հազար բացիկներ ուղարկելու, որով Քլինթոնից պահանջելու են չեղյալ հայտարարել այդ հրավերը: Իսկ ամերիկացի բազմաթիվ մեկնաբաններ նույնպես կոչ են անում ավելի հավասարակշռված քաղաքականություն որդեգրել Հայաստանի եւ Ադրբեջանի նկատմամբ, մանավանդ հաշվի առնելով, որ Հայաստանն ավելի սերտորեն է համագործակցում Ռուսաստանի հետ», եզրափակում է «Վաշինգտոն փոստը»:

ՀԱՍԱՐՈՍ

Գագիկ Ջհանգիրյանը՝ ՀՀ զինվորական դատախազ, հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈՒԼԻՍ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ըստ ՀՀ նախագահի մամուլի ծառայության տեղեկատվության, հիմք ընդունելով արդարադատության խորհրդի եզրակացությունը, նախագահն այսօր հրամանագիր է ստորագրել, որով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ է նշանակվել Գագիկ Ջհանգիրյանը: Հիշեցնենք, որ Գագիկ Ջհանգիրյանը Ռոբերտ Ամիրյանի գլխավորած կենտրոնական ընտրական հանձնաժողովի փոխնախագահն էր, այնուհետեւ ՀՀ արդարադատության փոխնախարարը, որի պաշտոնից ազատվել էր վերջերս, իր դիմումի համաձայն, վարչապետի որոշմամբ:

Սեւանի «Սեւան» հյուրանոցը եւ Երեւանի թիվ 5 հացի գործարանը՝ մասնավոր

ԵՐԵՎԱՆ, 7 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅՈՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի 7-ին ավարտվեց 10 ձեռնարկությունների բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության ժամկետը: ՀՀ կառավարության անդամների կենտրոնից հայտնեցին, որ դրանցից 3-ը չեն սեփականաշնորհվել: Դրանք են «Մարալիկի բամբակամանվածային ֆաբրիկա» ՓԲԸ, Գյումրիի «Բասեն» ձեռնարկությունը եւ «Բերիություն» Թումանյանի շրջանային միավորում» ՓԲԸ: Սեփականաշնորհվածների թվում են Երեւանի թիվ 5 եւ Քաջարանի հացի գործարանները ու Սեւանի «Սեւան» հյուրանոցը: Մեծ մասամբ գնվել է ներկայացված բաժնետոմսերի մոտ կեսը: Այս 7 ձեռնարկությունների համար մուծվել է ավելի քան 23 հազար սեփականաշնորհման հավաստագիր, որից ավելի քան 16 հազարը՝ Երեւանի թիվ 5 հացի գործարանի համար:

Կէժանանա՞ ծխախոտը

Հուլիսի 1-ից ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ, հանրապետության տարածք ներմուծվող եւ հայրենական արտադրանքի ծխախոտի համար կիրառվում է հաստատագրված վճարների նոր կարգ, ըստ որի ներմուծվող ծխախոտի արտադրանքի յուրաքանչյուր 1000 հատի դիմաց ֆիլտրով սիգարետների համար մուծելու են 2,5 դոլարին համարժեք դրամ, առանց ֆիլտրով ծխախոտի՝ 1,5, սիգարելլաների համար՝ 3,5, իսկ սիգարների՝ 700: Այդ թվում ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի յուրաքանչյուր 1000 հատի համար հաստատագրված վճարները ֆիլտրով սիգարետներին սահմանված է 1200, իսկ առանց ֆիլտրով սիգարետներին՝ 700 դրամ:

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության պետական բյուջեի եկամուտների պլանավորման վարչության պետ Գագիկ Արզումանյանն ասաց, որ 2,5 դոլարը մեծ գումար չէ: Հաշվարկելու դեպքում մեկ տուփ ծխախոտի համար կազմում է 25 դրամ, որը ներառում է ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ եւ մախսատուրք: Նշված գումարի վճարմամբ սպառվում են անուղղակի հարկերի գծով հարկատուի պարտավորությունները: Առավել մանրամասնելով, պարոն Արզումանյանն ընդգծեց, որ մինչ այդ այս երեք հարկերի միասին վճարումը միջին հաշվով 110 դրամ էր կազմում, որ բավականին բարձր գումար էր, եւ բոլորը խուսափում էին հարկեր վճարելուց: Իսկ հաստատագրված վճարման նոր կարգը բերում է փաստացի դրույքաչափերի իջեցում ընդհանուր հաշվով: Այսինքն, եթե նախկինում մեկ տուփ ծխախոտի համար սահմանված միջին 110 դրամը վճարում էր ներմուծողները, օրինակ, 10 տոկոսը եւ միջին դրույքաչափը կազմում



էր 11 դրամ, արդա հաստատագրված վճարը 25 դրամ սահմանելով, ներմուծողների 100 տոկոսի վճարման դեպքում արդահովվում է հարկային բեռի հավասարաչափ բաշխում բոլոր ներմուծողների վրա: Նա նշեց, որ սեփական արտադրողի մրցակցային վիճակը հարաբերականորեն նույնպես բարելավվում է, քանի որ ի տարբերություն ներմուծողի, նա ազատ է մախսատուրքից: Հայրենական արտադրության մեկ տուփ ծխախոտի համար հաստատագրված վճարը 24 դրամ է, իսկ այսօր Երեւանի ծխախոտի գործարանը մեկ տուփ ծխախոտի դիմաց վճարում է ընդամենը 38 դրամ անուղղակի հարկ: Ըստ նոր որոշման, Երեւանի ծխախոտի գործարանին այսուհետ հնարավորություն է ընձեռվում 14-16 դրամով էժանացնել ծխախոտի գինը: Իսկ թե դա ինչպես կազդի որակի վրա, արդա միակ եղանակը ազատ մրցակցության արդահովումն է: Այս կապակցությամբ պրն Արզումանյանն ընդգծեց, որ «Առավոտ» թերթում հրապարակվել է հոդված, որը ահազանգ է գցել ընթերցողներին: «Եթե հաստատագրված վճարը սահմանված է 2,5 դոլար 1000 հատի համար, դա նշանակում է մեկ տուփ սիգարետի համար մուծվում է 25 դրամ, ոչ թե 250, ինչպես նշել էր լրագրողը: Այս կարգը բերում է ոչ թե գների բարձրացում 250 դրամով, այլ 75 դրամ իջեցում», ընդգծեց պրն Արզումանյանը:

Այն հարցին, թե սահմանված դրույքաչափերը տարածվո՞ւմ են ներմուծվող բոլոր տեսակի սիգարետների վրա, չէ՞ որ ներկրվում է այնպիսի ծխախոտ, որի սպառումը դանդաղ է կատարվում եվ ճիշտ չէ՞ր լինի, որ հարկվեին ըստ տեսակների, պրն Արզումանյանը նշեց, որ դա ընդունելի տեսակետ է, բայց վարչարարության տեսանկյունից դժվար իրականացող գործընթաց: Հաստատագրված վճարի մեծությունը շատ փոքր է եւ տարբերակում մտցնելն էական խնդիր չի կարող լուծել:

ԱՐԱԲՈ ՍԱՖԱՐՅԱՆ

Արդյո՞ք դասագրքերի հրատարակության համար

Վերջապես կարո՞ղ ենք հին անեկդոտի հերոսի նման ասել. «Մի գլխացավանքից էլ պրծանք», թե՞ «փոսը չթոռած հող մի ասա»: Դասագիրքը այն բացառիկ գիրքն է, որի խոստհայաց հայացքից չի կարող խուսափել եւ ոչ մի երեխա: Դասագիրքը ուղղակի ընկալման մեջ է մտնում երեխայի հետ եւ ձեւավորում է վերաբերմունք գրքի նկատմամբ ընդհանրապես, գրքում հետաքրքրություն կամ ներշնչում տխրություն: Երկարամյա դժգոհություններից, խոսք ու գրույցից, «առ ու տուր»-ից հետո խնդիրն ի վերջո լուծում գտավ: Համաշխարհային բանկը 8 միլիոն դոլար է տրամադրել դասագրքերի հրատարակության երեքամյա ծրագրի իրականացմանը՝ հայտարարելով մրցույթ բոլոր մրցունակ հրատարակչությունների համար: Հուլիսի 7-ին տեղի ունեցավ կրթության փոխնախարարի, Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի ներկայացուցչի եւ հրատարակիչների հանդիպումը: Հանդիպման ժամանակ ներկայացվեցին մրցույթի պայմանները, համաշխարհային բանկի, նախարարության եւ հրատարակչության համագործակցության մեխանիզմները, յուրաքանչյուրի իրավասությունները ու պարտավորությունները: Մրցույթին ներկայանալու վերջնական ժամկետը հունվարի 14-ն է: Այնպես որ հրատարակիչները բավական ժամանակ ունեն ուժերը մոբիլիզացնելու, հումք եւ բազա գտնելու, տրանսպորտային խնդիրները լուծելու: Հրատարակիչի վրա է դրված գրքերը դպրոցներ եւ մարզկենտրոններ հասցնելու պարտավորությունը: Մրցույթը կանցնի 3 փուլով, որից առաջինը՝ առարկայական է: Նախարարության կազմած հանձնաժողովը կքննարկի դասագրքի բովանդակությունը: Այս փուլը չանցնելու դեպքում հրատարակիչը դուրս է մնում մրցույթից: Գրքերի որակը (փառք Աստծո) վերահսկելու են Համաշխարհային բանկի փորձագետները: Վերջապես, պետք է հաշվի առնել, որ գիրքը ծառայելու է երեք սերունդների, որից հետո կվերահրատարակվի: Փաստորեն, երեխայի առաջ պարտավորություն է դրվում մեկ տարի օգտագործելուց հետո գիրքը կարգին վիճակում վերադարձնել դպրոցին: Դա լրիվ հնարավոր է: Բարձրորակ, գեղեցիկ եւ հետաքրքիր դասագիրքը անպայման իր անդրադարձը կունենա եւ ուսումնական առաջադիմության եւ երեխայի գեղագիտական ճաշակի եւ շատ այլ գործոնների վրա:

Փորձենք հարցը դիտարկել մեկ այլ տեսանկյունից: Փաստորեն, ինչպես սովետական շրջանում (մենք շատ չենք էլ հեռացել այդ շրջանից), մշակվում է մեկ պետական ուսումնական ծրագիր եւ ըստ այդ ծրագրի՝ մի ուսումնական ձեռնարկ: Այսպիսով ուսուցիչը կամ դպրոցը չունի ընտրելու հնարավորություն: Որքանո՞վ է դա ճիշտ: Փոխնախարարի կարծիքով մոնոտեքնիկ պետությանն անհրաժեշտ է ծրագրի հստակություն ե՛ւ տվյալ պահին նույն առարկայի մի քանի դասագրքի հրատարակումը անհնար է եւ սխալ: Իսկ եթե որեւէ դպրոց, ելնելով իր կրթական ծրագրի առանձնահատկություններից, ցանկանա դասագիրք հրատարակել, արդա պետք է համաձայնեցնի նախարարության հետ: «Նախարարությունը ոչ ոքի ոչինչ չի պարտադրում, նա կատարում է իր պետական պարտավորությունը», ասաց փոխնախարարը:

Ի. ՍԱՐՈՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941 AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 561841
Apple
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Յողոմը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
HAK /EDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

տեղեկագիր

«Իմ ամենամեծ մխիթարությունն այն կլինի, որ դուք ընտրեք ինձ ՀՀԸ նախագահ»

Առաջարկում է Վանո Սիրադեղյանը, ավելացնելով՝ «որպեսզի Վազգեն Մանուկյանը մեկընդմիշտ կտրի հույսը, որ ՀՀԸ-ն պետք է վերացնի»

Հուլիսի 4-ին կառավարության նիստերի դահլիճում կայացավ ՀՀԸ-ի «Կենտրոն» տարածքային կազմակերպության ընդհանուր ժողովը: Շահեն Պետրոսյանի ելույթից դարձվեց, որ ՀՀԸ-ն «դպրոցում է ժողովրդավարության համար» Որդես «ամենակենսունակ քաղաքական ուժ»: Ըստ Պետրոսյանի, ՀՀԸ-ի առջև ծառացած խնդիրներ երկուսն են. ա) երկխոսություն կուսակցությունների հետ, բ) 1999 թ. խորհրդարանական ընտրությունների նախադրեալներում: Արա Սահակյանը ՀՀԸ-ին գովերգելիս առանձնացրեց 2 հատկանիշ, դրանք են՝ ՀՀԸ-ն դրագմատիկների եւ էքստիստների կուսակցություն է: Այնուհետեւ Արա Սահակյանը ներկաներին լուսավորեց՝ մեկնաբանելով «դրագմատիկ» եւ «էքստիզմ» հասկացությունները: Ըստ այդմ հայտարարվեց, որ դեռեւս 9 տարի առաջ (այն ժամանակ, երբ Սահակյանը ՀՀԸ անդամ չէր) կազմակերպությունը որդեգրել է իրականանալի գաղափարներ, բնականաբար, ֆենադատության սլաքը ուղղվեց դեպքական աղարաի չինովնիկների դեմ, եւ ինչպես միշտ՝ անհասցե-անանուն չինովնիկների: Ըստ Սահակյանի, այսօրվա հիմնական խնդիրներ երկուսն են՝ տնտեսական եւ դատաիրավական բարեփոխումների իրականացում: ՀՀԸ-ն որակելով որպես «դեսականամոլ» եւ «մի ֆիչ կոնսերվատիվ» կուսակցություն (այդ բառերի միայն դրական իմաստով. բնականաբար), Սահակյանը նկատեց, որ հենց այդ առանձնահատկությունների շնորհիվ է՝ որ «ձախլիկություն կամ աջլիկություն մեզ բույլ չենք տալիս»:

Արա Սահակյանի ելույթի հետագա հատվածն այնքան ուշագրավ էր, որ չենք կարող զերծ մնալ գայթակղությունից եւ դրանց առանձին, գրեթե բառավոր մտքերը, չհիշատակել բառացի:

«Մեր առանձնահատկությունների մեջ, այս տարիների ընթացքում, եղել է այն, որ ՀՀԸ-ն միշտ դրեզիդենտի կուսակցությունն է»: Այնուհետեւ՝ «Ընդհանրապես, ՀՀԸ օդոզիցիոն կուսակցություն դարձնելը մեծագույն հանցագործություն է, որովհետեւ օդոզիցիոն նիշան լրիվ զրաված է եւ այնտեղ են իրար ուտում, ինչպես տեսնում եք. դաշինքը հայհայվեց: Այդ նիշայի մեջ ՀՀԸ-ին տեղ չկա, ինչպես եւ Այբերս Բաղդասարյանի խմբին տեղ չկար»: «ՀՀԸ-ն կամ դրեզիդենտի հետ է կամ գոյություն չունի. այլ տիպի ՀՀԸ չի կարող լինել»: Հաջորդ ուշագրավ միտքը. «Եվ բոլոր մեր այն ընկերները՝ նախկին եւ ներկա, ովքեր մեր խնդիրները դիտարկել են հենց մաքսիմալիզմի դիրքերից՝ առավելագույն եւ ծայրահեղ մոտեցումների դիրքերից, նրանք, ի վերջո, նրանց հիվանդությունն ավարտվել է նրանով, որ նրանք հեռացել են այս կազմակերպությունից. դա եղել է միշտ եւ այժմ էլ կլինի այդպես»:

Արամ Մանուկյանի ելույթից հայտնի դարձավ, որ «ՀՀԸ-ն ամենաառողջ, ամենաբարոյական կազմակերպությունն է»:

Ընդհանուր ժողովում ելույթ ունեցավ նաեւ Վանո Սիրադեղյանը: Նա սկզբում հայտարարեց, որ «կազմակերպությունն իր ղեկավարներին երկրի նախագահին, Աժ նախագահին ծափահարելու կիրքը պետք է եռաղատիկ էլացնի: Մենք էդ ծափերով, թեկուզ ՀՀ նախագահին ծափահարելով, վերածվում ենք կոմունիստական կուսակցության ադեն իր իշխանության 70-դ տարում»: Այդ իսկ պատճառով Սիրադեղյանը նախագահական ընտրատարվի ժամանակ Տեր-Պետրոսյանի ընտրական ծրագրի ներկայացման մրցույթը որակեց որպես «ամբարշտի ցերեկույթ», քանի որ «օվացիա էր սարքվում» «երկրի ղեկավարի ամեն նախաձեռնությունից»: Պարզվեց, որ «այդ տեսարանը» Սիրադեղյանի՝ ՀՀԸ նախագահ դառնալու դրդապատճառներից մեկն է, որպեսզի ՀՀ նախագահի նկատմամբ «ՀՀԸ-ի վերաբերմունքը կանոնակարգվի»: Սիրադեղյանը նկատեց, որ այդ ցերեկույթն իր վրա թողել է «վատ երազի» տպավորություն: Սիրադեղյանն առաջարկեց, որ նորընտիր ՀՀԸ վարչությունում ընտրվեն 35-40 մարդ, որպեսզի վարչություն գան «բարձ մարդիկ»: Երեւանի քաղաքապետը նշեց, որ ներկուսակցական, ներիշխանական հարաբերություններում էթիկայի հաստատմամբ ՀՀԸ-ն պետք է օրինակ ցույց տա. ՀՀԸ-ն, որ «հոչակագիրը կարդալ է տվել Արամ Մանուկյանին», որը «գրել է, համաժողովրդական ճնշարկման է դրել եւ ընդունել է Սահմանադրությունը»: Վանո Սիրադեղյանը նշեց, որ պետք է ստեղծել ավանդույթներ, ի մասնավորի «դեմոկրատական տրադիցիաներ» (ցավոք, Հայաստանում այսօր այդ տրադիցիաներ են հաստատվում-Ն. Մ.): Որոշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ ՀՀԸ վարչության նախագահի հավակնորդ Վ. Սիրադեղյանը նշեց, որ անհատներ պետք է օրենքից բարձր կանգնած չլինեն. ինչն. ըստ Սիրադեղյանի, առկա է Հայաստանում: Վերջինս այդ երեւույթը համարեց սղաոնալիզմ պետության անվտանգության համար: Այնուհետեւ Սիրադեղյանն անդրադարձավ մեր ժամանակի «ամենահրատապ հարցին»՝ «Սովետական Միության գաղտնի ծառայությունների բոլոր հայ գործակալներին» ներում շնորհելուն, որոնք «մինչեւ հիմա շանտաժի տակ են»: Ըստ Սիրադեղյանի, այդ բայը «20 տոկոսով կբուլացնի հանրապետության ներքաղաքական իրավիճակը»:

Այնուհետեւ Սիրադեղյանն անդրադարձավ գործազրկության հիմնախնդրին, նշելով, որ գործազուրկների մեծ թիվ կա հենց ՀՀԸ-ում. մասնավորապես Լոռվա մարզի ՀՀԸ կազմակերպության «20 տոկոսը խողան է գնացել» գործազուրկ լինելու պատճառով: ՀՀԸ-ի գործազրկության 1-ին դրոշակակիրը, ըստ Սիրադեղյանի, Վազգեն Մանուկյանն էր, որը «վարչապետ դառնալու 1-ին օրվանից» «իշխանության գլուխ բղավելով, ինչպես Մոսկվայում են ասում, «կարմիր դիրեկտորներին» «ջարդի ենթարկեց» «արտադրությունը կազմակերպող այն մտավոր ուժը, որը համակրում էր Շարժմանը»: Որպես հետեւություն ասվածի՝ Սիրադեղյանը ընդգծեց. «Իմ ամենամեծ մխիթարությունն այն կլինի, որ դուք ընտրեք ինձ ՀՀԸ նախագահ, որպեսզի Վազգեն Մանուկյանը մեկընդմիշտ կտրի հույսը, որ ՀՀԸ-ն պետք է վերացնի»: Ըստ Երեւանի քաղաքապետի, Վազգեն Մանուկյանի այդօրինակ որոշվածքի պատճառն այն է, որ նա «կարող է աշխատել փոքրաթիվ մարդկանց հետ՝ 3, 4, 5 հոգու», քանի որ «10 հոգուց ավել մարդ լինելու դեպքում խրեմ չդայլանում են»: Սիրադեղյանը ասաց, որ ՀՀԸ ի 70 տոկոսը ներկայումս գործազուրկ է:

Ելնելով անդրադարձավ սեփականաշնորհմանը, ակամա կրկնելով ընդդիմության ներկայացուցիչներին, թե Հայաստանում սեփականաշնորհում չի եղել, այլ եղել է «սեփականության վերաբաշխում»: Նա կանգ առավ նաեւ «ազգային ունեցվածքի թալանի» վրա: Խոստացավ, որ տնտեսությանն ավելի մանրամասն կանդրադառնա իր «գլխավոր ելույթում»:

Չնայած իրավիճակին՝ համոզմամբ հայտնեց, որ «ամեն ինչ կորած չէ. իսկ ՀՀԸ-ի ներկա վիճակը անվանեց «բույլ վիճակ»: Վերջում Սիրադեղյանը նշեց, որ եթե «ՀՀԸ-ն լուրջ, համեստաբար, առանց բայֆթաբազության աշխատի պատասխան մեր այն հարցի, թե հատկապես ո՞ր կառավարությանն արժեր, որ խորհրդարանը անվստահություն հայտներ, վերջինս դատապարտեց՝ «բոլոր»:

Իսկ Էդվարդ Եգորյանը, մեկնաբանելով Վանո Սիրադեղյանի այս ելույթը, նկատեց. «Ես այն համարում եմ ՀՀԸ վարչության նախագահ, անտավարչության պետ, ՆԳ նախարար, անվտանգության խորհրդի մշտական անդամ Վանո Սիրադեղյանի ինքնաքննադատությունը»: Իսկ Սիրադեղյանը, լրագրողներից մեկի հարցին ի պատասխան, թե ինչպե՞ս է հասցնելու քաղաքապետի պաշտոնը համատեղել ՀՀԸ նախագահի պաշտոնի հետ, նշեց. «Ես ՀՀԸ-ով զբաղվելու եմ 1 ժամ առավոտը՝ սուրճի սեղանի շուրջ, 2 ժամ՝ յոթից հետո, իսկ ամբողջ աշխատանքային ժամը՝ քաղաքապետարանի համար»: Նա հավատաց նաեւ, որ ՀՀԸ նախագահ ընտրվելուց հետո առաջադրելու է իր թեկնածությունը որպես ՊՀ դրան գանավոր թափուր ընտրատարածքում: Իսկ ՀՀԸ նախագահ չընտրվելու դեպքում ի՞նչ է անելու, դատասխանեց՝ «Եթե չընտրվեմ՝ 5 տարի ավել կաղրեմ»:

ՀՀԸ «Կենտրոն» տարածքային կազմակերպության ժողովը բաց քվեարկությամբ, ցուցակով IX հանգամանքի դատվիրակներ ընտրեց: Կազմակերպության ընդհանուր ժողովին ներկա էր նաեւ Արմեն Ասլանյանը՝ ՀՀ նախագահական ընտրություններում Երեւանի մարզային ընտրական հանձնաժողովի նախագահը, որի նկատմամբ Սահմանադրական դատարանի որոշման համաձայն ՀՀ դատախազությունը պետք է քրեական գործ հարուցեր...

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Ինչո՞ւ են անհրաժեշտ քաղաքական միավորումները եւ ինչպե՞ս պահպանել դրանք

«Կոալիցիոն շինարարության խնդիրները» թեմայով ԱՄՆ միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից հուլիսի 5-ին եւ 6-ին անցկացված սեմինարը ճիշտ ժամանակին էր ընտրված եւ անչափ կենսական էր միավորումների ստեղծման ու պառակտման տենդով բռնկված մեր քաղաքական կուսակցությունների համար: «Արմենիա» հյուրանոցում անցկացված սեմինարին մասնակցում էին Հայաստանում գործող կառավարող եւ ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների անդամներն ու աջակիցները, նաեւ՝ հանրապետության տարբեր մարզերից: Առաջին օրվա պարապմունքին մասնակցում էին բացառապես կառավարող քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները, ծրագիրը նույնն էր նաեւ հաջորդ օրվա մասնակիցների՝ ընդդիմադիր կուսակցությունների համար:

Ներկաներին հղած իր ողջույնի խոսքում Հայաստանում ԱՄՆ դեսպան Պիտեր Թոմսոնը նշեց, որ բոլոր երկրներում էլ քաղաքական կուսակցությունների նպատակը իշխանություն ձեռք բերելն է, որին հասնելու ժողովրդավարական ճանապարհներից մեկը միավորումների կազմավորումն է: Միացյալ Նահանգների անցած քաղաքական ուղուց օրինակներ բերելու իմաստն այն էր, որպեսզի ներկաները ընկալեին, թե որքան կարեւոր է փոխզիջում հասկացությունը քաղաքական պայքարում: Պրն դեսպանն այն հաջողության հասնելու միակ գրավականը համարեց:

Ծրագրի ղեկավար Թիմ Ռուսոն ներկայացրեց սեմինարի մասնակից երկու փորձագետներին. Տոհան Համելզ՝ Բելգիայից, Տիբոր Վիդոշ՝ Հունգարիայից, ասելով, որ նրանք քաղաքական կուսակցությունների հետ աշխատանքի մեծ փորձ ունեն: Փորձագետները միջազգային փորձի վրա հիմնվելով եւ, ամենից առաջ, իրենց երկրների փորձը նկատի ունենալով, հրավիրյալներին ծանուցեցին, թե ինչպես կարելի է միավորումներ կազմել եւ դրանք պահպանել:

Նրանց ասելով, միավորումում ընդգրկված քաղաքական կուսակցությունները շատ հաճախ իրարամերժ կարծիքներ ունեն, սակայն, դրանով հանդերձ, մեկ ընդհանուր նպատակ ունեն՝ ինչպես հաջողության հասնել ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով: Հաջողության հասնելու համար անհրաժեշտ է մի կողմ թողնել բոլոր տարաձայնությունները եւ միավորվել մեկ ընդհանուր նպատակի շուրջ: Միավորումներ կարող են կազմել անգամ այնպիսի քաղաքական կուսակցություններ, որոնք դաժան պայքար են մղում միմյանց դեմ, այդուհանդերձ, ընդհանուր նպատակի համար պայքարում նրանք հաջողություն ունենում են, եթե կարողանում են ձերբազատվել անձնական ամբիցիաներից: Փորձագետները ընդգծեցին, որ շատ կարեւոր է, թե ինչի շուրջ են համախմբվում կուսակցությունները: Ընդ որում, շատ կենսունակ են այն միավորումները, որոնք համախմբվում են գաղափարի շուրջ եւ ոչ թե անհատի, չնայած վերջինիս դեպքում էլ հնարավոր է հաջողություններ ունենալ:

Նախընտրական միավորումները նկատի ունենալով, նրանք վստահեցրին, որ քաղաքական կուսակցությունները սկզբունքային շատ հարցերի շուրջ չհամաձայնելով, կարող են միավորվել՝ միշտ գիտակցելով, որ միավորվելով պայքարելը շատ ավելի հետաքրքիր է, քան առանձին: Ուժեղ միավորում ունենալու համար կարեւորեցին երկու հիմնական գործոն՝ որոշումներ կայացնելու գործընթացը եւ արդյունավետ հաղորդակցություն, առանց որի միավորումը փլուզման է դատապարտված:

Բելգիացի փորձագետը խոսելով իր երկրի առանձնահատկությունների մասին, նշեց, որ տեղի բնակչությունը լեզվական ու կրոնական խիստ տարանջատվածություն ունի, հետեւաբար նաեւ՝ հակադիր կարծիքներ: Դրանով հանդերձ, բնակչությունը համագործակցելու միտում ունի, եւ իրենց մոտ յուրաքանչյուր իշխանություն միավորվելով է իշխանության գալիս:

Մտքերի փոխանակության ընթացքում, որին տեղացիներն, ի դեմ, շատ պասիվ էին արձագանքում, նկատվեց, որ սեմինարին մասնակցող Աժ պատգամավորներին առավելապես հետաքրքրում են խորհրդարանական միավորումները՝ խմբակցությունները: Հարցերի շրջանակը Աժ-ի ներկայիս իրավիճակն էր պատկերում՝ խմբակցությունից դուրս գալու ի՞նչ մեխանիզմներ գոյություն ունեն, խմբակցությունում կամ միավորումում համախմբվածներն ի՞նչ պարտավորություններ ունեն, նման հարաբերությունները գրավոր, թե՞ բանավոր ձեւով են կարգավորվում, պարտավորությունը խախտողներին պատժելու ի՞նչ եղանակներ կան եւ այլն: Հունգարացի փորձագետը Հայաստանի ու Հունգարիայի նման երկրների համար միավորումում ընդգրկվողների միջեւ գրավոր համաձայնությունը պարտադիր համարեց, միաժամանակ չբացառելով, որ այն կարող է թղթի վրա մնալ, իսկ օրենքը խախտողներին պատժելու միակ միջոցը՝ լրատվամիջոցներով հանդես գալն է: Ինչ վերաբերում է խմբակցությունների վերաբերյալ Աժ «Հանրապետություն» միավորման ներկայացուցիչների ցուցաբերած հետաքրքրությանը՝ ծրագրի ղեկավար Թիմ Ռուսոն հարկ համարեց նշել, որ ԱՄՆ Սենատում բոլոր որոշումները կայացվում են մեծամասնության ձայնից ավելիով, որպեսզի չոտնահարվեն փոքրամասնության շահերը:

ՍՈՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

հասարակություն

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը ռահիրանեց մահապատժի ինստիտուտը: Խորհրդային շրջանում Հայաստանում մահվան դատավճիռ, փաստացիորեն, ի կատար չէր ածվում: Մահապարտին տեղափոխում էին հանրապետությունից դուրս: Ողջ աշխարհակարգը պետական գաղտնիք էր համարվում: Տեղափոխման օրվա եւ ժամի մասին տեղեկանում էր միայն Հայաստանի ՆԳ նախարարը՝ ծանոթանալով Մոսկվայից ստացած համապատասխան կարգադրություններով փաթեթին: Բանտարկյալի հետագա ճակատագրի մասին նրան այլեւս չէին հայտնում: Շատ մանրամասներ հայտնի դարձան միայն ԽՍՀՄ փլուզումից հետո: Վերջին այդպիսի վճիռը իրագործվել է Սարատովում: ՀՀ նոր Սահմանադրության 17-րդ հոդվածով մահապատիժ սահմանելու դեմ: Սակայն ըստ ՄԴ-ի, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը չոչնչացրեց է կախված լինի հասարակական կարծիքից, մանավանդ որ բացակայում է լիարժեք տեղեկատվությունը: Հակառակ դեպքում միգուցե հարցումներն այլ արդյունքներ ունենային: Հարցի խաղաղասիրությունն իրականացնող պատասխանատու անձինք, հասարակական կարծիքին ունկնդիր լինելուց զատ, պարտավոր են լիարժեք տեղեկատվություն ստանալ: Միջազգային համաներումը գնահատում է Հայաստանի այս քայլը, որով նա միանում է աշխարհի երկրների գերակշիռ մասին, որ օրենքով կամ գործնականում մահապատիժը դադարեցված է:

Այնուհանդերձ, Հայաստանում մահապատժին առնչվող որոշ հարցեր շարունակում են մտահոգել կազմակերպությանը: Առաջին հերթին, տեղեկությունները, որ օրինական մարմինների որոշ պատասխանատու անձինք խոստովանություն կորզելու ֆիզիկական կամ այլ բռնության, հարկադրանքի միջոցներ են կիրառում այն դեպքերում, երբ հանցագործությունը կարող է մահապատժի հանգեցնել: Ինչպես, օրինակ, 1996-ին, երբ բարձրագույն դատավճիռ կայացվեց երեք ամբաստանյալների նկատմամբ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հայտարարում է, յուրաքանչյուրն ունի կյանքի իրավունք, արդա կտրուկ հայտնում. «ոչ ոք չպետք է ենթարկվի կտանջների կամ դաժան, անմարդկային, արժանապատվությունը ոտնահարող վերաբերմունքի եւ պատժի»: Սրանից ելնելով, ՄԴ-ն անվերապահորեն հանդես է գալիս բոլոր տեսակի հանցագործությունների դիմաց մահապատիժ սահմանելու դեմ:

Աշխարհի 99 երկրներ դադարեցրել են մահապատժի կիրառումը: Եվրախորհուրդը ԱՊՀ երկրներին իր կազմի մեջ ներգրավելու պայմանների թվում մատնանշում է մահապատժի գործադրման վրա արգելք դնելը: Այդուհանդերձ, շատ երկրներ շարունակում են այն կիրառել, անհրաժեշտությունը պայմանավորելով գլխավորապես զսպման, սանձման գործոնով: Սակայն սպանությունը, որ հաճախ կատարում են ծայրահեղ հոգեվիճակում, հազիվ թե հնարավոր լինի այդպիսով զսպել: Իսկ ծրագրված սպանություն կատարողի համար օրենքը կարող է հակազդեցություն առաջացնել եւ նա շահագրգիռ լինի վերացնել նաեւ ականատեսներին: Մահապատիժը վերացրած երկրներում հանցագործությունների աճ չի նկատվել: ՄԱԿ-ի հանցագործությունների կանխման կոմիտեի դիտարկումներն ասում են այն մասին, որ դժվար է արդյունքել, որ՞ պատիժն առավել զսպող դեր ունի, ցմահ բանտարկությո՞ւնը, թե՞ մահապատիժը: Այստեղ մեր հերթին պարզապես հիշեցնենք մահապատժի վերաբերյալ քննարկումների առաջին փուլում մամլո մի ասուլիսին ՀՀԾ նախագահ Տեր Հուսիկ Լազարյանի ակնարկը, որ մահապատիժը գերադասելի է, քանի որ պետության վրա ավելի էժան է նստում:

Մահապատիժ կիրառելու մյուս փաստարկն այն է, որ կատեգորվում է հանցագործության երկրորդումը: Հակառակ այն դեպքերում, երբ մահապատիժը դառնում է միակ արդարացի պատասխանը: Բայց միշտ էլ գոյություն ունի սխալվելու պարագան. որը փոխհատուցումն անհնարին դարձնելու վտանգ է պարունակում: Հաճախ պատժի գործադրումը կարող է պայմանավորված լինել թաքնված վրեժխնդրությամբ:

ՀՀ Սահմանադրությամբ կտանջները կամ դաժան վերաբերմունքն արգելված են, եւ դատավարական չափանիշների խախտումով ստացված վկայությունները չունեն իրավաբանական ուժ: Քննիչները եւ այլոք իրական հանցագործություն են կատարում՝ կալանավորին բռնի ուժով պարտադրելով ցուցմունքներ տալ: «Դրո» գործով ամբաստանյալներից ոմանք, այդ թվում եւ մահապատժի հոդվածի ենթականերից մեկը, հաստատում են նման դեպքերը: Թեպետ դատարանում հրաժարվել են ցուցմունքներից, սակայն գործի ունկնդրման ընթացքում դրանք չեն ժխտվել:

«Դրո», «Վ. Հովհաննիսյան+30» գործերով դատապարտվածները հայտարարում են, որ իրենց ջարդում են, ենթարկում ֆիզիկական ու հոգեկան այլեւայլ ծնշումների, որ ոչ միշտ են հնարավորություն ունեցել հանդիպելու իրենց փաստաբանների հետ, կամ այդ հանդիպումներն ընթացել են ընթացակարգի խախտումով: Մանվել Եղիազարյանը հայտարարեց, որ դաժանաբար ծեծվել է ձերբակալման օրը, օրինապահ մարմինների պատասխանատու անձինք ծեծել են կնոջն ու երեխային: Ա. Հովսեփյանին հարկադրել են ցուցմունքներ տալ մեղադրողների եւ էլեկտրական հոսանքի, ինչպես եւ նրա վեց հարազատներին կալանելու մեթոդներով: Մի մասին սպառնացել են հաշվեհարդար տեսնել ընտանիքների հետ, նախնական կալանքի ժամանակ ջարդել են Արմեն Մոմջյանի ծնողը, արդա սպառնացել նեսել հոմոսեքսուալիստների խումբ: Վ. Հովհաննիսյանի փաստաբանը նրան հանդիպելու հնարավորություն է ունեցել միայն 3 անգամ եւ միշտ այլոց ներկայությամբ:

Մահապատիժը պետությանը դրդում է կատարելու նույն գործողությունը, ինչը պատժվում է օրենքով: Չի կարող լինել առավել կանխամտածված եւ սառնասիրտ այլ սպանություն: Սխալվելու հավանականությունը եւ չհիմնավորված որոշումների ընդունումը չեն բացառվում, ուստի անհանդուրժելի են դատական սխալները, որոնց արդյունքում մարդկանց զրկում են կյանքից: Միջազգային ընդունված կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա արդարադատության բարձրագույն աստիճանների կողմից իր նկատմամբ կայացված վճռի վերանայման իրավունք: Շատերը կարող են այդ հնարավորության մասին չիմանալ:

Մահապատժի դատավճռությունը չի սահմանափակվում պատժի փաստացի պահով: Սպասման ընթացքը՝ երկարատեւ մեկուսացմամբ եւ պարտադրված աննպատակությամբ, կարող է հանգեցնել հուսալքման, հոգեկան խանգարումների: ՀՀ դատախազ Հ. Խաչատրյանի կարծիքով՝ սա չի համապատասխանում որեւէ օրենքի: Մի քանի տարի դատավճռի ի կատար ածմանը սպասողներին, նրա համոզմամբ, ներում պետք է շնորհել:

Ինչպես միջազգային, այնպես եւ հայ հասարակության մոտեցումը մահապատժի վերացմանը՝ հակասական է: ՀՀ դատախազն ինքը դեմ է նախկին քրեական օրենսգրքում ամրագրված հանցակազմերի կարգակցությամբ մահապատիժ սահմանելուն, սակայն 2-3՝ առավել ծանրագույն հանցամանքներում կատարած սպանությունների համար մահապատիժը հարկ է համարում պահպանել: ՄԴ-ն սակայն պնդում է, որ այն պետք է փոխարինել ցմահ բանտարկությամբ, որովհետեւ զսպող գործոնը ոչ թե պատժի խստությունն է, այլ հանցագործությունը բացահայտելու մեծ հավանականությունը: Եվ եթե հասարակությունը բացահայտման ու արդար դատաստանի վստահություն ունենա, կվազեն ինքնադատաստանի միտումները:

Այնուամենայնիվ մոտեցումները հակասական են: Կարծում եմ, նաեւ հետեւյալ պարագայում. ՄԱԿ անվտանգության խորհուրդը, հիմնադրելով Միջազգային քրեական տribունալներ նախկին Հարավսլավիայում եւ Ռուանդայում, ուղղակիորեն բացառեց մահապատիժը ծանրագույն հանցագործությունների՝ ցեղասպանության, մարդկության դեմ այլ հանցագործությունների, ինչպես եւ մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար: Արդյո՞ք սա մարդասիրական գործողություն է: Համենայն դեպս Միջազգային համաներումը կոչ է անում ՀՀ իշխանություններին՝ փոխարինել մահապատիժը նվազ խիստ վճռներով, պատասխանատու հայտարարել մահապատժի արգելման մասին, ձեւավորել հասարակական կարծիք, ստորագրել վերացման մասին միջազգային փաստաթղթերը եւ ՀԱՀԽ անդամակցության պարտավորությունների համաձայն եւ միջազգային կազմակերպությունների խնդրանքով՝ ժամանակին հրապարակել ճշգրիտ եւ վիճակագրական տվյալներ մահապատժի իրագործման վերաբերյալ:

Պատրաստեց ՊԵՏՐՈՍ ՊԱՊՈՅԱՆԸ

Մահապատժի վերացում. Ո՞րն է մարդասիրական

Միջազգային համաներում (ՄԴ) կազմակերպությունը տարածել է մի փաստաթուղթ, որ հանգամանորեն վերլուծում է վերջին տարիներին Հայաստան իր այցելությունների եւ հավաքած տեղեկությունների արդյունքները:

ժը դիտարկվում է որպես «Պատժի բարձրագույն միջոց— առավել ծանր հանցագործությունների համար մինչեւ նրա վերջնական դադարեցումը»: Դեռեւս կիրառվող ԽՍՀՄ քրեական օրենսգրքում մահապատիժ էր սահմանված խաղաղ պայմաններում կատարվող 18 եւ ռազմական իրավիճակում գործած 16 հանցագործությունների դիմաց: ՄԴ-ի տվյալներով, անկախությունից հետո այդ ցուցակից դուրս է բերվել միայն 3 հոդված: Մահապատիժ չի կիրառվում անչափահաս, հանցագործության կամ դատավճռի պահին անմեղսագիտակ, ինչպես եւ հղի կանանց նկատմամբ: Ներկայումս առաջին աստիճանակարգի ատյան է համարվում Գերագույն դատարանը, որի նախագահությունն էլ վճռաբեկ որոշումներ է կայացնում: Նոր Սահմանադրության համաձայն՝ առաջնային դերակատարումը փոխանցվելու է Սահմանադրական եւ Քննիչ-վերաքննչական դատարաններին: Այդ, ժամանակ տեղական դատարանները կօժտվեն մահվան դատավճիռ արձակելու լիակատար իրավունքով: Եթե դրանից հետո վճիռը հաստատում է նաեւ Գերագույն դատարանը, միակ ճանապարհը սահմանադրորեն մնում է ՀՀ նախագահին ներում շնորհելու խնդրագիր ներկայացնելը: Խնդրագրերից անկախ՝ նախագահին առընթեր ներման հանձնաժողովում գրանցվում են մահվան բոլոր դատավճիռները: Հրաժարվելով ստորագրել դատավճիռները՝ ՀՀ նախագահը կարծես անձամբ հանդես է գալիս այդ պատժի դեմ, սակայն դատարանները շարունակվում են մահվան վճիռները կայացնել: Սահմանափակ տեղեկություններից դատելով՝ մահվան դատավճիռները ծանրացուցիչ հանգամանքներում կատարված կանխամտածված սպանությունների առիթով են: Որոշ գործերում առկա է խաղաղական հենք: ՄԴ-ի տվյալներով առաջին նման դեպքը Ադրբեջանի երկու խաղաղաշիների նկատմամբ կայացրած վճիռն էր, երբ ՀՀ Գերագույն դատարանը մեղավոր ճանաչեց նրանց երեք հայերի սպանության եւ ջրամբարի թունավորման հանցավորում: Հետաքրքրական է ՄԴ-ի ձեւակերպումը. հանցագործության առարկան «Լեռնային Դարաբաղ անունով վիճարկելի տարածքն էր հարեւան Ադրբեջանում»: Մեկնաբանությունն ավելորդ է մասնավորապես տեղի սղության պատճառով:

ՄԴ-ի 1992-ի այցելությունից հետո, երբ բարձրագույն պատժի էր արժանացել 3 մարդ, այդ թիվը հսկայական արագությամբ աճել է: Ներկայումս մահապատժի դատապարտված 21 հոգուց ողջ են 18-ը (2 տղամարդ իբր մահացել են բնական մահով, երրորդին սպանել են բանտախցի հարեւանները): Կազմակերպության կարծիքով՝ ՀՀ նախագահը փաստորեն չի մեղմացրել ի կատար չածված մահապատիժները, քանի որ որեւէ տեղեկություն չկա ներումների մասին:

Չեւական այս դադարեցումից հետո ՀՀ Աժ-ն առաջին ընթերցմամբ ընդունեց մահապատիժը լիովին վերացնելու օրենք: Որոշումը հաստատվեց բուռն բանավեճերի արդյունքում: Դեմ քվեարկողների մեծ մասը համարում էր, որ պատիժը պետք է պահպանել առավել ծանրագույն հանգամանքներում կատարած սպանությունների համար: Կամ անցկացնել հանրաքվե: Որոշ պատգամավորներ մահապատժի լիակատար վերացման անհնարինությունը բացատրում են հասարակության պահանջով: Սակայն ըստ ՄԴ-ի, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը չոչնչացրեց է կախված լինի հասարակական կարծիքից, մանավանդ որ բացակայում է լիարժեք տեղեկատվությունը: Հակառակ դեպքում միգուցե հարցումներն այլ արդյունքներ ունենային: Հարցի խաղաղասիրությունն իրականացնող պատասխանատու անձինք, հասարակական կարծիքին ունկնդիր լինելուց զատ, պարտավոր են լիարժեք տեղեկատվություն ստանալ: Միջազգային համաներումը գնահատում է Հայաստանի այս քայլը, որով նա միանում է աշխարհի երկրների գերակշիռ մասին, որ օրենքով կամ գործնականում մահապատիժը դադարեցված է:

Այնուհանդերձ, Հայաստանում մահապատժին առնչվող որոշ հարցեր շարունակում են մտահոգել կազմակերպությանը: Առաջին հերթին, տեղեկությունները, որ օրինական մարմինների որոշ պատասխանատու անձինք խոստովանություն կորզելու ֆիզիկական կամ այլ բռնության, հարկադրանքի միջոցներ են կիրառում այն դեպքերում, երբ հանցագործությունը կարող է մահապատժի հանգեցնել: Ինչպես, օրինակ, 1996-ին, երբ բարձրագույն դատավճիռ կայացվեց երեք ամբաստանյալների նկատմամբ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հայտարարում է, յուրաքանչյուրն ունի կյանքի իրավունք, արդա կտրուկ հայտնում. «ոչ ոք չպետք է ենթարկվի կտանջների կամ դաժան, անմարդկային, արժանապատվությունը ոտնահարող վերաբերմունքի եւ պատժի»: Սրանից ելնելով, ՄԴ-ն անվերապահորեն հանդես է գալիս բոլոր տեսակի հանցագործությունների դիմաց մահապատիժ սահմանելու դեմ:

Աշխարհի 99 երկրներ դադարեցրել են մահապատժի կիրառումը: Եվրախորհուրդը ԱՊՀ երկրներին իր կազմի մեջ ներգրավելու պայմանների թվում մատնանշում է մահապատժի գործադրման վրա արգելք դնելը: Այդուհանդերձ, շատ երկրներ շարունակում են այն կիրառել, անհրաժեշտությունը պայմանավորելով գլխավորապես զսպման, սանձման գործոնով: Սակայն սպանությունը, որ հաճախ կատարում են ծայրահեղ հոգեվիճակում, հազիվ թե հնարավոր լինի այդպիսով զսպել: Իսկ ծրագրված սպանություն կատարողի համար օրենքը կարող է հակազդեցություն առաջացնել եւ նա շահագրգիռ լինի վերացնել նաեւ ականատեսներին: Մահապատիժը վերացրած երկրներում հանցագործությունների աճ չի նկատվել: ՄԱԿ-ի հանցագործությունների կանխման կոմիտեի դիտարկումներն ասում են այն մասին, որ դժվար է արդյունքել, որ՞ պատիժն առավել զսպող դեր ունի, ցմահ բանտարկությո՞ւնը, թե՞ մահապատիժը: Այստեղ մեր հերթին պարզապես հիշեցնենք մահապատժի վերաբերյալ քննարկումների առաջին փուլում մամլո մի ասուլիսին ՀՀԾ նախագահ Տեր Հուսիկ Լազարյանի ակնարկը, որ մահապատիժը գերադասելի է, քանի որ պետության վրա ավելի էժան է նստում:

Մահապատիժ կիրառելու մյուս փաստարկն այն է, որ կատեգորվում է հանցագործության երկրորդումը: Հակառակ այն դեպքերում, երբ մահապատիժը դառնում է միակ արդարացի պատասխանը: Բայց միշտ էլ գոյություն ունի սխալվելու պարագան. որը փոխհատուցումն անհնարին դարձնելու վտանգ է պարունակում: Հաճախ պատժի գործադրումը կարող է պայմանավորված լինել թաքնված վրեժխնդրությամբ:

ՀՀ Սահմանադրությամբ կտանջները կամ դաժան վերաբերմունքն արգելված են, եւ դատավարական չափանիշների խախտումով ստացված վկայությունները չունեն իրավաբանական ուժ: Քննիչները եւ այլոք իրական հանցագործություն են կատարում՝ կալանավորին բռնի ուժով պարտադրելով ցուցմունքներ տալ: «Դրո» գործով ամբաստանյալներից ոմանք, այդ թվում եւ մահապատժի հոդվածի ենթականերից մեկը, հաստատում են նման դեպքերը: Թեպետ դատարանում հրաժարվել են ցուցմունքներից, սակայն գործի ունկնդրման ընթացքում դրանք չեն ժխտվել:

«Դրո», «Վ. Հովհաննիսյան+30» գործերով դատապարտվածները հայտարարում են, որ իրենց ջարդում են, ենթարկում ֆիզիկական ու հոգեկան այլեւայլ ծնշումների, որ ոչ միշտ են հնարավորություն ունեցել հանդիպելու իրենց փաստաբանների հետ, կամ այդ հանդիպումներն ընթացել են ընթացակարգի խախտումով: Մանվել Եղիազարյանը հայտարարեց, որ դաժանաբար ծեծվել է ձերբակալման օրը, օրինապահ մարմինների պատասխանատու անձինք ծեծել են կնոջն ու երեխային: Ա. Հովսեփյանին հարկադրել են ցուցմունքներ տալ մեղադրողների եւ էլեկտրական հոսանքի, ինչպես եւ նրա վեց հարազատներին կալանելու մեթոդներով: Մի մասին սպառնացել են հաշվեհարդար տեսնել ընտանիքների հետ, նախնական կալանքի ժամանակ ջարդել են Արմեն Մոմջյանի ծնողը, արդա սպառնացել նեսել հոմոսեքսուալիստների խումբ: Վ. Հովհաննիսյանի փաստաբանը նրան հանդիպելու հնարավորություն է ունեցել միայն 3 անգամ եւ միշտ այլոց ներկայությամբ:

Մահապատիժը պետությանը դրդում է կատարելու նույն գործողությունը, ինչը պատժվում է օրենքով: Չի կարող լինել առավել կանխամտածված եւ սառնասիրտ այլ սպանություն: Սխալվելու հավանականությունը եւ չհիմնավորված որոշումների ընդունումը չեն բացառվում, ուստի անհանդուրժելի են դատական սխալները, որոնց արդյունքում մարդկանց զրկում են կյանքից: Միջազգային ընդունված կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա արդարադատության բարձրագույն աստիճանների կողմից իր նկատմամբ կայացված վճռի վերանայման իրավունք: Շատերը կարող են այդ հնարավորության մասին չիմանալ:

Մահապատժի դատավճռությունը չի սահմանափակվում պատժի փաստացի պահով: Սպասման ընթացքը՝ երկարատեւ մեկուսացմամբ եւ պարտադրված աննպատակությամբ, կարող է հանգեցնել հուսալքման, հոգեկան խանգարումների: ՀՀ դատախազ Հ. Խաչատրյանի կարծիքով՝ սա չի համապատասխանում որեւէ օրենքի: Մի քանի տարի դատավճռի ի կատար ածմանը սպասողներին, նրա համոզմամբ, ներում պետք է շնորհել:

Ինչպես միջազգային, այնպես եւ հայ հասարակության մոտեցումը մահապատժի վերացմանը՝ հակասական է: ՀՀ դատախազն ինքը դեմ է նախկին քրեական օրենսգրքում ամրագրված հանցակազմերի կարգակցությամբ մահապատիժ սահմանելուն, սակայն 2-3՝ առավել ծանրագույն հանցամանքներում կատարած սպանությունների համար մահապատիժը հարկ է համարում պահպանել: ՄԴ-ն սակայն պնդում է, որ այն պետք է փոխարինել ցմահ բանտարկությամբ, որովհետեւ զսպող գործոնը ոչ թե պատժի խստությունն է, այլ հանցագործությունը բացահայտելու մեծ հավանականությունը: Եվ եթե հասարակությունը բացահայտման ու արդար դատաստանի վստահություն ունենա, կվազեն ինքնադատաստանի միտումները:

Այնուամենայնիվ մոտեցումները հակասական են: Կարծում եմ, նաեւ հետեւյալ պարագայում. ՄԱԿ անվտանգության խորհուրդը, հիմնադրելով Միջազգային քրեական տribունալներ նախկին Հարավսլավիայում եւ Ռուանդայում, ուղղակիորեն բացառեց մահապատիժը ծանրագույն հանցագործությունների՝ ցեղասպանության, մարդկության դեմ այլ հանցագործությունների, ինչպես եւ մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար: Արդյո՞ք սա մարդասիրական գործողություն է: Համենայն դեպս Միջազգային համաներումը կոչ է անում ՀՀ իշխանություններին՝ փոխարինել մահապատիժը նվազ խիստ վճռներով, պատասխանատու հայտարարել մահապատժի արգելման մասին, ձեւավորել հասարակական կարծիք, ստորագրել վերացման մասին միջազգային փաստաթղթերը եւ ՀԱՀԽ անդամակցության պարտավորությունների համաձայն եւ միջազգային կազմակերպությունների խնդրանքով՝ ժամանակին հրապարակել ճշգրիտ եւ վիճակագրական տվյալներ մահապատժի իրագործման վերաբերյալ:

Պատրաստեց ՊԵՏՐՈՍ ՊԱՊՈՅԱՆԸ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Մոմի լույսով կեսօրին որոնում են հզորի...

Օրերս խմբագրությունը մի նամակ ստացավ բոլշակառու ամուսիններ Վանո Քոսակյանի եւ Հասմիկ Մարդանյանի ստորագրությամբ, որում մատնանշված էր նրանց աշխատանքի վերադարձների «փողոց ընկնելու» փաստը: Ինչպես «Ազգ» բերված նամակից, այդպես եւ «02» շաբաթաթերթի մայիսի 22-ի թողարկումից («Ինչպես դաշտանվել, երբ հարձակվող չկա») տեղեկանում ենք, որ 1995-ի հունիսի 28-ին, իր տանը, իր իսկ կնոջ (Ռուզաննա Ղազարյան) դանակի հարվածից, տպանվել է նրանց որդին՝ «Հայէլեկտրամեքենա» միավորման 21 տեղամասի պետ Վարդան Քոսակյանը: Սպանության արիվ քննության նյութերում արձանագրված մանրամասների մի մասը արդեն իսկ հրապարակված է (տես «02», Սարգիս Հոռոփյանի ստորագրությամբ վերը նշված հոդվածը) եւ առաջնորդում է ոճրագործության անհերքելության չափով: Այնուամենայնիվ բոլշակառու ամուսինների նամակի բուն էությունը հիշ այլ է...

1995-ի հունիսի 29-ին, Ռուզաննա Ղազարյանը կալանավորվում է եւ մեղադրվում ՀՀ fr. or-ի 100 հոդվածի 1-ին մասով (դիտավորյալ սպանություն, որը կատարվել է առանց ծանրացուցիչ հանգամանքների): Սակայն, կալանքին հաջորդած նախաքննության ընթացքում՝ օգոստոսի 2-ին, մեղադրանքն արդեն ձեռք է բերում այդ որակ, որը կոչվում է «անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանություն, որը պատժվում է ազատազրկմամբ մինչեւ երեք տարի ժամանակով, կամ ուղղիչ աշխատանքներով մինչեւ երկու տարի ժամանակով» (ՀՀ fr. or-ի 102 հոդված): Հետաքրքրական է, որ քննության նյութերում, երբ փորձ է արվում վերականգնել ոոչ ողբերգության ժամանակաշրջանի հաջորդականությունը, որեւէ կերպ չի նշվում «պաշտպանականին» հանգեցնող ոչ մի իրադարձություն: Ինչեւ... Այնուհետեւ կիրառելով ՀՀ նախագահի համաներման հրամանագիրը, Ռուզաննա Ղազարյանը ազատ է արձակվում: Ընդ որում հետաքրքիր է, որ հենց տիկին Ռուզաննայի վկայությամբ իր կյանքին որեւէ վտանգ չի սպառնացել, որը կարող էր մղել անհրաժեշտ պաշտպանության:

Ազատվելուց հետո, 1995-ի նոյեմբերի 20-ին, Ռուզաննա Ղազարյանը գույքի եւ զարդերի պահանջով հայցադիմում է ներկայացնում դատարան, ընդդեմ սկեսրոջ՝ Հասմիկ Մարդանյանի: Ընդ որում, արդարադատության գնահատումը կատարվում է չափազանց կամայական ձեւով (այսպես օրինակ՝ շրջանավարտի ոսկե մեդալը՝ 1000 դոլար եւ այլն) եւ հենց այս ձեւով էլ բավարարվում է հայցադահանջը: Նշենք, որ Ռուզաննա Ղազարյանին է հասկացվում նաեւ Ծերեթլի փողոցի N58 շենքի N15 բնակարանը, որը դեռ 1968-ին Հասմիկ Մարդանյանը ստացել է գործարանից: Ավելի ճիշտ, Շենգավիթի ժողդատարանը որոշած է լինում, որ այդ բնակարանի 2 սենյակը հասկացվի Ռուզաննա Ղազարյանին եւ նրա երկու երեխաներին, իսկ մեկը՝ ամուսնու ծնողներին: Ի դեղ, այս մի սենյակը աճուրդի է դրվել 3000 դոլարով, որը գումարը Ռուզաննային «հասցեագրելու» հեռանկարով: Այնուհետ, Շենգավիթի ժողդատավոր Ա. Հովսեփյանը Տավուշի ժողդատավոր Վ. Աղասյանին դիմում է մի գրությամբ, որ «պահանջում է Հասմիկ Մարդանյանից եւ նրա տնտեսությունից հօգուտ Ռուզաննա Ղազարյանի 36745 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ բռնագանձելու համար պարտադրաններին պահպանող Տավուշի շրջանի Նավուր գյուղում Հասմիկ Մարդանյանի եւ Վանիկ Քոսակյանի անունով գտնվող տան վրա կալանք դնել այն աճուրդային կարգով վաճառելու համար»: Ինչպես «Ազգին» հասցեագրած նամակում գրում են բոլշակառու ամուսիններ, «ներկայումս մեզ համար եւ 1915 թիվն է եւ Սումգայիթի կոտորածը, ու մենք այսօր մեր այս տարիքում չգիտենք, թե ո՞վ կարող է մեզ մենակել իր օգնության ձեռքը»:

Փողոցում հայտնված ծեր ամուսիններ իրենց նամակի վերջում խնդրում են. «Գոնե ինչ-որ չափով տղագրել նամակը, որ գոնե կարդանք ու մի գիշեր հանգիստ քնենք»: Սակայն մի՞թե խնդիրը քնած երկրի կողմից լքված բոլշակառուների հանգիստ քունն է...

Ա. Ղ.

«ԱՅԱՔՍ»
ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՉԵԶ
ՖՐԱՆՍԻԱ
ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ՆԻՑԱ-ՓԱՐԻԶ-ԵՐԵՎԱՆ ԵՐԹՈՒՂՈՎ

ՓԱՐԻԶ	4 or, «ELYSEES» ★★★ հարմարավետ հյուրանոց քաղաքի կենտրոնում
ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ	Փարիզի տեսարժան վայրերում, այցելություն Վերսալ
ՆԻՑԱ	10 or ծովափնյա հանգիստ «DE FLORENCE» ★★★ հարմարավետ հյուրանոց
ՍՆՈՒՆԴԸ	օրը 2 անգամ (նախաճաշ եւ ընթրիք)

ՓԱՍՏԱԹՈՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՀՈՒԼԻՍԻ 12-Ը

«ԱՅԱՔՍ»
ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՀԱՃԵԼԻ
ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
ՊՈՒՇԿԻՆԻ 43/ա
ՀԵՌ. 538845

ԱԶԳ

Միջազգային

ՄՈՍԿՎԱ

Ելցինը մեկնեց արձակուրդ

ՄՈՍԿՎԱ, 7 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը մեկնեց հանգստի: Ամառանոցային համալիրը, որտեղ հանգստանալու է նախագահը, գտնվում է Պետրոզավոդսկ քաղաքից 25 կիլոմետր հեռավորության վրա՝ լճի ափին: Թե որքան կմնա Ելցինը Կարելիայում, չի հաղորդվում:

Կրեմլի մոտակայքում ռումբ հայտնաբերվեց

ՄՈՍԿՎԱ, 7 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Ռուսաստանի ոստիկանությունը հայտնաբերել եւ վնասազերծել է այն պայթուցիկ նյութերը, որոնք տեղադրված էին Կրեմլի մոտակայքում կառուցվող Պետրոս Առաջինի մեծադիր արձանի պատվանդանի տակ: «Ինտերֆաքս» գործակալությունը հաղորդում է, թե ֆաքս է ստացել կոմունիստական մի խմբավորումից, որն իրեն անվանում է «Ռուսաստանի Դաշնության հեղափոխական ռազմական խորհուրդ»: Վերջինիս ներկայացուցիչը հայտնել է, թե պայթուցիկն ինքն է տեղադրել՝ ի նշան բողոքի Լենինին թաղելու ծրագրի: Պետրոս Ա-ի արձանի հեղինակ Զուրաբ Ծերեթելին հուշարձանը պայթեցնելու փորձն անվանել է սադրանք, որն ուղղված է Մոսկվայի կառավարության եւ առաջին հերթին քաղաքապետ Յուրի Լուժկովի քաղաքականության դեմ:

Վրաստանի անվտանգության նախարարը հեռացավ

ԹԲԻԼԻՍԻ, 7 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն գեներալ-մայոր Գուրամ Գաբոկիձեին նշանակեց երկրի անվտանգության նախարարի պաշտոնակատար: Այս նշանակումը հետեւեց Օքար Կվիրայայի՝ հուլիսի 5-ին տված հրաժարականին: Վրաստանի խորհրդարանականները Կվիրայային մեղադրել էին առաջատար լրագրողների հեռախոսային խոսակցությունների լսումն արտոնելու մեջ: Նրանք պնդում էին նաեւ, որ նա աշխատել է Ռուսաստանի հատուկ ծառայությունների օգտին եւ պատասխանատու է 1993 թվականին թալանի մեջ կասկածվող վեց անձանց գնդակահարելու համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

«Գազպրոմը» աղահովում է պետբյուջեի 25 տոկոսը

Օրերս Երեւան ժամանած «Գազպրոմ» խոշորագույն բաժնետիրական ընկերության վարչության վերընտիր նախագահ Ռեմ Վյախիրեւը հայտնված է, որ տիրապետելով բնական գազի հզոր պաշարների, ունենալով հանքավայրերի հետազոտման եւ շահագործման համար անհրաժեշտ արտոնագրեր, ինչպես նաեւ լավ զարգացած տրանսպորտային ցանց, ընկերությունն այսօր պատրաստ է ռուսաստանյան շուկան լիովին աղահովելու համաաղասխան վառելիքով: Փաստորեն, գազի ռուսաստանյան շուկայի առկայությունը եւ այդ համատեքստում «Գազպրոմի» գործոնը ներկայումս վտանգում են վառելիքի արեւմտյան շուկայի երբեմնի աղյուսավեստությունը: Ավելին, մինչեւ 1988-ի երկրորդ կիսամյակ «Գազպրոմը» չի նախատեսում բաժնետոմսեր վաճառել համաշխարհային շուկաներում, բեւեւ նման դիմումներ, այն էլ մեծ քանակությամբ, ստացվում են: Ինչպես նշում է Ռեմ Վյախիրեւը, «ընկերության համար առաջնայինը գլխավոր փայաքիրոջ՝ պետության շահերն են»: Ընդ որում, այս հարցի կամ կարգախոսի շուրջ եւ պետությունը, եւ ընկերությունը բավական հեշտ են հանգել ընդհանուրի. «Գազպրոմը ոչ միայն կարող է աղահովել ֆեդերալ բյուջեի քառորդ չափը, այլ նաեւ դառնալ բարեփոխումների շարժաքարշ եւ հայրենական արտադրության վերածնության գործոն», հայտարարել է Ռեմ Վյախիրեւը հունիսի 28-ին ընկերության բաժնետերերի ժողովի ժամանակ: Նշենք միայն, որ առանց բարձրագույն բառեր չեն, քանի որ սոսկ «Գազպրոմի» շնորհիվ հնարավոր եղավ հունիսին ֆեդերալ բյուջեն կատարել 100 տոկոսով: Պաշտոնական տվյալներով, կոնցեռնը առաքվել է պետբյուջեի հարկային եկամուտների 41 տոկոսը:

1996-ին «Գազպրոմի» շուրջ եղած մամուր եկամուտը կազմել է շուրջ 33,2 տրիլիոն ռուբլի: Այս ամենի հետ աստղաբաշխական թիվ է կազմում գազի առաքողների դարձը ընկերությանը, որը գերազանցում է 70 տրիլիոն ռուբլու չափ: Սրանցից են ՌԴ պաշտպանության նախարարությունը, ՆԳՆ առանձին խմբեր, ՌԴ ազգային ակադեմիան եւ բյուջետային այլ կազմակերպություններ: Այնուամենայնիվ, «Գազպրոմն» այսօր պատրաստ է դարաստոմսերի եւ արդանքային վարկերի տեսքով ձեւակերպել պետական դարձ, եթե ի հարկե ՌԴ ֆինանսների նախարարությունը վերջ ի վերջո կարողանա մշակել կայուն եւ մշտապես գործող կանոններ: Բանն այն է, որ ֆինանսների նախարարությունը մերթ դադարեցնում է հաշիվների փոխադարձ մարումների գործընթացը, մերթ կրկին վերականգնում: Սակայն թվում է, թե խնդիրը լուծելի է նման մի ընկերության դարձում, քանզի իրողությունն այն է, որ «Գազպրոմը» ներկայումս հանդես է գալիս որպես ՌԴ ֆինանսական հիմք:

Մնում է միայն հուսալ, որ հուլիսի 1-ին ՀՀ եւ ՌԴ համագործակցության հարցերով զբաղվող միջկառավարական հանձնաժողովի ստորագրած համաձայնագրերը հնարավորին չափ արագ կյանքի գործնական հիմքի վրա, ինչի շնորհիվ եւ հնարավոր կլինի լուծել ներգաղթաստվարարման շատ ու շատ հարցեր:

ԱՐԹՈՒՐ ՂԱՊԱԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻՑ

Շարքային ամերիկացին հարուստ է շարքային եվրոպացուց

Սոցիալիստական ջոկատի փլուզման ցնցումային ալիքները առիթ եղան սոցիալ-տնտեսական հայտնի պայթյունների, որոնց թիրախը դարձավ նախ եւ առաջ Եվրոպա աշխարհամասը: Գերմանական երկու երկրների միացման, Չեխոսլովակիայի եւ գլխավորապես Հարավսլավիայի մասնատման, նոր երկրների եւ նախապատվությունների ի հայտ գալով արձանագրվեց որոշակի անկում «կանաչ ու հանդարտ» աշխարհամասի բնակչության կենցաղում: Ճիշտ այդ ժամանակ աշխարհագրական առումով մեկուսացված ԱՄՆ-ը հանգիստ ու վստահորեն շարունակում էր իր զարգացումը, չզլանալով օգտագործել Եվրոպայում ծնունդ առած հակասությունները եւ շահերի բախումը: Ինչ խոսք, նշված «սոցիալական պայթյունները» անգոր են խիստ նկատելի կերպով տատանելու շարքային արեւմտաեվրոպացու աղքուսը, թեեւ ընդհանուր առմամբ կենսակերպի անկում, այնուամենայնիվ, դժվար չէ արձանագրել: Եվ ահա, ինչպես հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, «Կոնֆերենս-Բորդ» տնտեսական կազմակերպության տվյալների համաձայն, այսօր արդեն մեկ ընչին բաժին ընկնող եկամուտը ԱՄՆ-ում 20 տոկոսով բարձր գումար է կազմում, քան Եվրոպայում: Հաղորդագրության մեջ նշվում է, որ նման տարբերության 50 տոկոսը պայմանավորված է եվրոպական գործազրկության բարձր մակարդակով: Գործոն է նաեւ այն, որ Եվրոպայում անհամեմատ ցածր է աշխատանքի արդյունավետությունը, թեեւ ինչպես վկայում են ուսումնասիրությունները, այս ցուցանիշը Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում եւ Նիդեռլանդներում չի զիջում ամերիկյան գործակցին:

Ա. Ղ.

ՀԱՄԱՌՈՏ

Ալբանիա. Ընտրությունների երկրորդ փուլը՝ խաղաղ պայմաններում

ՏԻՐԱՆԱ, 7 ՀՈՒԼԻՍ, ՓԱՍՏ: Ալբանացիները հուլիսի 6-ին անցկացրին խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլը: Ըստ ստացված հաղորդագրությունների, քվեարկությունը բոլոր տեղամասերում հանգիստ պայմաններում է անցել, սակայն ընտրողների ակտիվությունն ավելի ցածր էր, քան առաջին փուլում: Նախնական տվյալներով, առաջին փուլում հաղթանակ են տարել ընդդիմադիր սոցիալիստները, սակայն վերջնական պաշտոնական արդյունքներն առայժմ չեն հրապարակվել: Միաժամանակ սոցիալիստական կուսակցության առաջնորդ Նանոն հայտարարել է, որ ինքն է դառնալու երկրի հաջորդ վարչապետը: Ներկայումս վարչապետի պարտականությունները ժամանակավորապես կատարում է Նանոյի կուսակից Բաշկին Տինոն, որն ըստ Նանոյի՝ դառնալու է իր «աջ ձեռքը»: Միեւնույն ժամանակ, Նանոն հրաժարվել է պատասխանել այն հարցին, թե ով կարող է փոխարինել գործող նախագահ Սալի Բերիային, որը խոստացել է հրաժարական տալ նոր կառավարության կազմավորումից հետո:

Պաղեստինցի առաջնորդի սպանությունը կազմակերպել էր Յիխոտ Բարաքը

Իսրայելական «Մաարիվ» թերթի տեղեկությունների համաձայն, ընդդիմության ղեկավար Յիխուդ Բարաքը, որը մինչեւ Աշխատանքի կուսակցության առաջնորդ դառնալը հրամանատարական պաշտոններից մեկն էր զբաղեցնում, 88 թվականին ղեկավարել է պաղեստինցիների առաջնորդներից մեկի Աբու Ջիհադի սպանության գործողությունը: Իսրայելը մինչեւ այժմ հերքում էր այդ գործողությանն ունեցած իր մասնակցությունը: RFI

Որքա՞ն արժե թաղումը Գերմանիայում

Մեկ մարդու հուղարկավորումը հազարներ արժե, բայց ապրողները թաղումը կյանքի հոգս չեն դարձնում

«Ես որ մեռնեմ, որքա՞ն ծախս կնստի», երբեմն-երբեմն հարցնում էր տատս, որ վերջին տարիների շուկայական գներից ծանր հոգոց էր արձակում եւ խնայդրամարկղում իր տնտեսած կլորիկ գումարը հաշվում-դարձնում արժեզրկված դրամ, հետո՝ դոլար ու... վախենում: «Ուրեմն չմեռնե՞մ», հարցին տառադանք խառնած հարցրեց մի երկու տարի առաջ, երբ «Ազգ»-ում կարդաց, թե որքան հեշտ է Հայաստանում մեռնելը, իսկ որքան դժվար թաղվելը:

Գերմանիայում, օրինակ, մարդիկ ոչ միայն չեն վախենում ապրել (բեւեւ հոգսեր՝ որքա՞ն ուզես) այլեւ... թաղվել: Մեռնելն այստեղ այդքան էլ հեշտ չէ: Ո՞ր գերմանացին փողի դատճառով բժշկի չի գնում: Թեեւ բժշկական ծառայությունն էլ պետության կողմից ըստ արժանվույն գնահատվում է, ասենք, ողեղի վիրահատություն իրականացրած բժիշկը ստանում է 15 հազար գերմանական մարկ, ատամնաբույժները, որոնց հաճախորդների թիվն անհամեմատ բարձր է, բնակչության ամենատաղահովված խավն են եւ այլն: Ինձ հաճախ զարմանքով հարցնում են՝ «Հայաստանում հիվանդն իրո՞ք հիվանդանոց չի գնում, որովհետեւ փող չունի, ճի՞շտ է»: Մեծագույն հոգատարություն եւ խնամք կա անբուժելի կոչվող հիվանդների նկատմամբ, որոնց կյանքի տեւողությունն անհամեմատ երկար է Գերմանիայում:

Այդուհանդերձ, որքա՞ն արժե թաղվելը Գերմանիայում հարցիս դատասխանը փորձում եմ ստանալ ոչ միայն համաղատասխան ծառայություններից, այլեւ հանգուցյալներից մեկի՝ գերեզմանոցում ինձ հանդիպած զավակներից:

Եկեղեցական գերեզմանոցներում թաղվելն ավելի էժան է (ասենք հավատացյալ կաթոլիկ ես եւ ուզում ես թաղվել կաթոլիկների գերեզմանոցում, կամ մահմեդական ես եւ դեղի Մեքքա նայող քո գերեզմանոցն ես ընտրում), քան կառավարականում: Իհարկե, կախված քաղաքների մեծությունից, գերեզմանոցում տեղի գները տատանվում են, ասենք՝ 300-6000 գերմանական մարկ: Իմ ներկայացնելիք թվերը միջին մեծության քաղաքի կառավարական գերեզմանոցին են վերաբերում:

Գերմանացին աղահովագրական ծառայությունների մասին չի մոռանում, եւ ոչ միայն իր առողջությունը հոգ տանելու անհանգստությամբ: Այստեղ սովորաբար շատերն են իրենց կյանքն աղահովագրում, մեծ ընկերությունների, գործարանների, ֆաբրիկաների աշխատողները տարեկան ոչ մեծ գումար են մուծում նման աղահովագրական ընկերություններին, որոնք դարձավորվում են իրենց թաղման ծախսերն հոգալ:

1 տեղանոց գերեզմանի գինը 30 տարվա համար արժե 10 հազար մարկ: 30 տարուց հետո գերեզմանի տեղը սովորաբար ուրիշին են տալիս՝ բնական դատճառաբանությամբ՝ 10 տարի հետո դագաղը փչանում է, 25 տարի հետո էլ կմախքն է փոշիանում: Դիմելու դեղքում սակայն կարող ես այդ տարածքում ընտանիքիդ մեկ ուրիշ անդամի աճյունն էլ ամփոփել: Երբ հարազատներն ուզում են 30 տարուց հետո էլ գերեզմանը դահպանջում է 12 վրկ:

նել, տարեկան դարձավորվում են մուծել 270 գերմանական մարկ եւս:

2 քառակուսի մետր է տրամադրվում յուրաքանչյուր շիրիմի: Ամուսնական կամ ընտանեկան գերեզմաններին հատկացվող տեղը միշտ ավելին է՝ 4 քառակուսի մետր: Փող չունեցողների մարմինը սովորաբար այրում են, աճյունասափորները շարում կողք-կողքի՝ 70x50 սմ չափերով տարածքներում: Գերեզման փորելու համար 1500 մարկ է մուծվում, դագաղը, կախված փայտի տեսակից, 2 հազար մարկից կարող է 15 հազար արժենալ, նույնիսկ ավելին: «Կարող է անգին էլ լինել», ասացին խոսակիցներս: Հին գերեզմանոցներում հիշատակի քարերը մատուռանման են, հրեշտակների քանդակներով, տարեր արձանիկներով: Այդ «ճոխությունն» այսօր ոչ մի տեղ չես տեսնի: Գերմանական գերեզմանոցում ամենատարածվածը գրանիտե վտրիկ, ողղահայաց դրվող ողղանկյուն քար է, որի արժեքը 2 հազար մարկ է: Փայտից դարձ, անդաճույճ խաչեր էլ են դրվում: Հայերի գերեզմանները անուն, ազգանուն, ծննդյան, մահվան թվականների հետ Մասիս սարի փորագրությամբ են զանազանվում: Անանուն գերեզմաններն էլ հիշ չեն, տանց վրա որեւէ տեղեկություն փնտրելն անիմաստ է: Մեզ բացատրեցին, որ մարդիկ կան, որոնք մահվանից հետո գերադատում են անհայտ «աղբեղու» տարբերակը: Շիրմաքարը, ծաղիկները, հավերժական վառվող մոմը յուրաքանչյուր գերեզմանի դարձարդիր «կահավորանքն» են:

Բոլոր գերեզմաններն խնամվում են: Կա ընկերություն, որը տարին 3 անգամ՝ գարնանը, ամռանը եւ աշնանը ծաղիկներ է տնկում, իսկ կարգի է բերում գերեզմանը յուրաքանչյուր շաբաթ: Մեր այցելության ժամանակ արդեն խնամված գերեզմանների վրա գրություն կար «խնամվել է հինգշաբթի օրը»: Տարեկան այդ խնամքի դիմաց մուծվում է 300-600 մարկ՝ կախված գերեզմանի չափից:

Մահացածին ոչ միայն տանը չեն դահում, այլեւ դագաղն էլ հարազատները սովորաբար չեն տանում: Գերեզմանոցներին կից մատուռում հավաքվում են հանգուցյալի հարազատները, ընկեր-բարեկամները: Հոգեհանգստյան արարողությունից հետո ֆրակներով, սեւ ցիլինդրներով եւ ճերմակ ձեռնոցներով գերեզմանոցի հատուկ աշխատողները դագաղը դեղի գերեզմանափոս են տանում: Նրանց դարձակությունն է եւ հող լցնելը: Սգավորները մի բուռ հող, ծաղիկներ եւ խունկ են լցնում արդեն ծածկված դագաղի վրա: Հոգեհացի սեղանը հայաստանյան ճոխության հետ եզրեր չունի: Ամենամտերիմներին որեւէ արձարանում թխվածքով սուրճ են սովորաբար մատուցում ու վերջ:

Եվրոպայում երկար բնակություն հաստատած մեր հայրենակիցները նման կարգը նորմալ են համարում, ինչի հետ նկատելիորեն դժվար են հաշտվում վերջին տարիներին Հայաստանից ժամանածները:

Հայաստանի թաղման կարգը բոլորիս է հայտնի, գներն էլ օրեցօր աճում են, եւ ձեր մարդիկ շարունակում են վախենալ՝ դատվով թաղվելու դիմաց ո՞վ եւ որտեղի՞ց ոլորի վճարի:

Գերմանիայո՞ւմ է դժվար մեռնելը, թե՞ Հայաստանում...

Ընթերցողի եզրակացությանն ենք թողնում:

ԼՈՒՍԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱԶԳ

Մշակույթ

Ծովանկարչի կովկասյան պատկերները...

Հովհաննես Այվազովսկու ծննդյան 180-ամյակի առթիվ

«Ազգ» թերթի արտահասմիջային աշխատակից Լեւոն Կանցյանը տպագրության է հանձնել Հովհաննես Այվազովսկուն նվիրված «Ծովանկարչի կովկասյան պատկերաշարը» մենագրությունը: Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում մի հատված գրքից:

Աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ստեղծագործությունների սվար շարքում առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայրենական թեմաներով պատկերները, որոնք նա վրձնել է իր գործունեության գրեթե բոլոր փուլերում: Կովկասյան եւ Անդրկովկասյան պատկերաշարը կազմում է նրա գեղարվեստական հարուստ ժառանգության կարեւոր մասը: Ծովի ու ջրի տարերքի նրա ըմբռնումները հարազատ են մայր ժողովրդի գեղարվեստական մտածողությանը, նրա վրձնած շատ ծովապատկերներ նույնպես իրավացիորեն համարվում են հայ, ինչպես նաեւ կովկասյան ժողովուրդների ազգային գունանկարչության օրգանական մասը: Եվ պատահական չէր, որ անցած դարի վաթսունականի վերջերին Հովհաննես Այվազովսկին մեկնում է Կովկաս, այնտեղից՝ Անդրկովկաս: Սկզբում նա լինում է հյուսիսային Կովկասում՝ Վլադիկավկազում եւ Հյուսիսային Դաղստանում, ապա Դարյալի կիրճով ճանապարհվում է Անդրկովկաս: Այցելում է նաեւ ծովափնյա բազմաթիվ հայաբնակ քաղաքներ: Ավելի քան երկու ամիս անցկացնում է Թիֆլիսում:

«Մշակ» թերթը տեղեկացնում է, որ նկարչի պատվին վրացի եւ հայ մտավորականները այստեղ կազմակերպում են ծոխ ճաշկերույթ 200 մարդու մասնակցությամբ, որի ժամանակ վրացի գրողները մեծարգո հյուրին հյուրասիրում են ոսկյա երիզ ունեցող եղջրափողով գինի: Նկարչին շատ է ուրախացնում հյուրասիրության ազգային այդ ձեւը եւ նա Թիֆլիսի Կովկասյան գրողների ընկերությանը նվիրում է երկու նկար՝ «Գունիբ» եւ «Թիֆլիսի տեսարան»: Այվազովսկու պատվին կազմակերպված այդ հանդիպումը եւ նրա գործերի ցուցահանդեսը կարեւոր նշանակություն ունեցան ինչպես նկարչի ստեղծագործական կյանքում, այնպես էլ հայ ու վրաց գեղարվեստական մշակույթի պատմության մեջ: Հանճարեղ նկարչի ճանապարհորդությունը Անդրկովկասի հայաբնակ քաղաքներ եւ մանավանդ նրա այցը Թիֆլիս, խորապես օգնում են մոտիկից տեսնելու եւ ճանաչելու իր հարազատ ժողովրդին, նրա կյանքն ու կենցաղը, բնակավայրերը, բնության առանձնահատկությունները: Կովկասում եւ Անդրկովկասում ճանապարհորդելը հատկանշական է նաեւ նրանով, որ հետագայում ծովանկարիչը նկարում է բազմաթիվ պատկերներ Կովկասի լեռնային բնության տեսարաններից, որոնցից հատկապես աչքի են ընկնում «Դարյալի կիրճը», «Կովկասյան լեռների շղթան», «Փոքրիկ նավահանգիստը», «Սուխումի արեւելյան ծովափը», «Թիֆլիսի տեսարանը», «Ռիոն գետը», «Շնային փլվանք Կազբեկի մոտ ռազմավիրական ճանապարհին», «Դաղստանի տեսարանը», «Գունիբ լեռը» եւ այլն: Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում «Դարյալի կիրճը» փոքրածավալ կտավը, որը հավանաբար նա նկարել է ճանապարհին, կարճատեւ դադարի ժամանակ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի բնության պատկերները: Առավել հայտնի են Արարատ լեռան, Արարատյան դաշտի եւ Սեւանա լճի պատկերները: 1868-ին Անդրկովկաս կատարած ճանապարհորդության ժամանակ Այվազովսկին նկարում է Արարատի եւ Սեւանա լճի երկու պատկեր: «Արարատ» պատկերը ներկայացնում է Արարատը եւ Արարատյան դաշտը ուղտերի քարավանով: Առաջին պլանի վրա պատկերված դաշտավայրի մի զգալի մասը, ինչպես եւ Արարատ լեռը ծածկված են մշուշով: Այդ մշուշի միջից երկինք է խոյացել Արարատ լեռան մեծ, սպիտակափայլ գագաթը, որն իշխում է շրջապատի վրա: Դիտողի ուշադրությունը գրավում է առաջին պլանը, ուր նկարված են Արարատյան դաշտը եւ ճանապարհով անցնող ուղտերի քարավանը: Ուղտերը բեռնավորված են մեծ ու ծանր հակերով: Վարպետությամբ պատկերված է առաջին պլանի բոլոր մանրամասները: «Արարատ» եւ «Սեւանա լիճ» կտավները կարեւոր են ազգային նկարչության պատմության համար: Հայ նկարիչներից Այվազովսկին առաջինն էր, որ Թիֆլիսում նկարելով հայրենի երկրի բնության այդ անգուգական տեսարանները, որոնք Հայաստանի խորհրդանշաններն են, ցույց տվեց մայր հայրենիքի գեղեցկությունը եւ հասարակության ու երիտասարդ նկարիչների ուշադրությունը հրավիրեց հայոց աշխարհի գեղատեսիլ բնության վրա: Այդ թեմաներին նկարիչն անդրադառնում է նաեւ հետագայում՝ «Արարատյան լեռան հովիտը», «Արարատ» կտավներում, որոնք գտնվում են Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանում: Հետագայում այդ թեմաներին անդրադարձել են հայ եւ վրացի նկարիչներ Բաշինջաղյանն ու Թորոսեն, Թերլեմեզյանն ու Ժվանիան, Սարյանն ու Աբուլաձեն: Թիֆլիսում ծովանկարիչն ստեղծում է հայ եւ վրաց ժողովուրդների կենցաղը պատկերող նկարներ, որոնցից առանձնապես հայտնի են «Թիֆլիս» եւ «Թիֆլիսի տեսարանը» երկու մեծակտավ աշխատանքները: Դրանք սյուժետային պատկերներ են կենցաղային բովանդակությամբ: Բնության տեսարանը, մարդկանց եւ նրանց ազգային տարազը Այվազովսկին այստեղ նկարել է սուր դիտողականությամբ ու ճշտորեն: Նա հիանալիորեն վերարտադրել է տեղացի մարդկանց՝ վրացիներին եւ հայերին, նրանց շարժ ու ձեւի, ազգային յուրահատկության մեջ: Պատահական չէ, որ գեղանկարիչներ Ստեփան Ներսիսյանը եւ Վախթանգ Կիրվալիձեն ստեղծում են «Ժամանց գեսափին» եւ «Խնջույք» կտավները, որ վկայում է այն, որ հանճարեղ ծովանկարիչն իր ստեղծագործության համար ընտրել է այնպիսի թեմա, որ բնորոշ է տվյալ շրջանի Թիֆլիսի հայերի եւ վրացիների կենցաղում: Ժողովրդի կյանքին նկարչի հաջաստեղծության մասին է վկայում այն փաստը, որ Այվազովսկու անվան հետ է կապված Կովկասում եղած կոտիս բռնցքամարտի վերացումը:

Յոթանասունականների վերջին Այվազովսկին փակելով իր ցուցահանդեսը Թիֆլիսում, մեկնում է Պետերբուրգ, իսկ այնտեղից՝ մի քանի հայերի խնդրանքով Բաքու է ուղարկում 14 նկար՝ ցուցահանդեսի համար: Այդ գործի կազմակերպումն իր վրա է վերցնում մի գործարար հայ՝ Ֆրիդրիխ Բաբայանը: «Մշակ»-ը գրեց, որ «Այվազովսկու Բաքվի պատկերահանդեսը ունեցավ մեծ հաջողություն, առավոտից ուշ երեկո ցուցահանդեսը լիքն է այցելուներով: Նրա պատկերները ցուցահանդեսից տեղափոխվում են հայերի բնակարանները»: Ծերունական հիվանդության պատճառով Այվազովսկին հնարավորություն չունեցավ մասնակցելու Բաքվի ցուցահանդեսին: Բաքվի ջերմ վերաբերմունքը խորապես ոգեշնչում է նկարչին, որի մեջ նա տեսնում էր հարազատ ազգին մատուցած ծառայության գնահատականը, այն մեծ, անհուն սերը, որ նա զգացել էր ամբողջ կյանքում Կովկասի ժողովուրդների մեջ:

Հովհաննես Այվազովսկին նոր էր վերադարձել Թեոդոսիա, երբ նրան է այցելում Վարդգես Սուրենյանցը: Նա բերել էր Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի ռուսերեն հոբելյանական շքեղ հրատարակությունը իր գեղարվեստական ձեւավորմամբ եւ նկարազարդումներով: Տաղանդաշատ գեղանկարիչը իր ուսուցչին է նվիրում սեփական ստեղծագործական աշխատանքի պտուղը՝ պատկերազարդ «Բախչիսարայի շատրվանը» գիրքը՝ ջերմ ընծայագրով: Հենց այս ժամանակ էլ նրանց միջեւ տեղի է ունենում զրույց՝ հայ եւ վրացի նկարիչների միավորման, մեկ՝ Կովկասյան միություն կազմելու մասին: Այվազովսկին մեծ հոգատարություն է ցուցաբերում Թիֆլիսի նկարիչների ադագայի, նրանց մեկ ընկերության մեջ համախմբելու համար, որ իրագործվում է ավելի ուշ եւ Կովկասյան նկարիչների միության պատվավոր նախագահ (պրեզիդենտ) է ընտրվում «Նորին մեծություն» ծովերի արքան:

ԼԵՎՈՆ ԿԱՆՑՅԱՆ

ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«Կինը եւ տղամարդը» դրամատիկականի բեմում

Երեւանի քաղաքաթեատրանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի բեմում դարձյալ նոր բեմադրություն է: Հուլիսի 5-ին եւ 6-ին ներկայացվեց Նորայր Ադալյանի «Կինը եւ տղամարդը» պիեսը՝ դրամատիկականցիների փայլուն կատարմամբ: Հանդիսատեսն ականատես եղավ Հրայր Հարությունյանի, Լուիզա Ղամբարյանի, Հովհաննես Բաբախանյանի, Գոհար Իգիթյանի, ՀՀ վաստակավոր արտիստ Լեւոն Շարաֆյանի, Կարպիս Շամլյանի տաղանդավոր խաղին՝ արտելով մտքերի ու զգացմունքների ալեկոծումներ: Նոր բեմադրության ռեժիսորն է ճանաչված դերասան Արամ Անանյանը (սա նրա առաջին քայլն է այս ասպարեզում), նկարիչը՝ Կարեն Գրիգորյանը, ռեժիսորի օգնականը՝ Գեւորգ Աբազյանը, երաժշտական ձեւավորումը կատարել է Ասոն Փափազյանը: Ամբողջ բեմադրությունը, որն ունի ֆարս-դրամատիկական սիմֆոնիայի հնչեղություն, իրականացվել է անվանի բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Խանդիկյանի ինքնատիպ ղեկավարությամբ: Քննադատությունը առաջիկայում կասի իր խոսքը, բայց այսօր իսկ ակնհայտ է, որ թատերական ասպարեզ է մուտք գործել անհատի եւ հասարակական կյանքի հարաբերության մասին մի պիես, որին վիճակված է հակասական մեր օրերի, վերջին տարիների մեր տագնապների վկայությունը լինել:

Տեսարան ներկայացումից

Արվեստի ակադեմիան՝ Շիրակի առաջին մշակութային բուհ

Առաջիկա ուսումնական տարում արդեն ուսանողական եռուզեռով կլցվի Գյումրիի արվեստի ակադեմիան: ՀՀ կառավարության որոշմամբ այն ստացել է պետական կարգավիճակ, դառնալով մշակույթի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը Շիրակում: Առայժմ նա կգործի ուղղես երեւանի մշակութային ԲՈՒՀերի մասնաճյուղ: Կոմիտասի անվան պետական երաժշտանոցն ակադեմիայում կունենա գործիքային-կատարողական, խմբավարության եւ վոկալ արվեստի բաժիններ, թատերական արվեստի ինստիտուտը՝ դերասանական արվեստ, ռեժիսուրա, թատերագիտություն, գեղարվեստի ինստիտուտը՝ քանդակագործություն, գեղանկարչություն, գծանկարչություն:

Միայն մի անհարմարություն կլինի այդ տարվա դիմորդների համար: Կազմակերպչական պատճառներով թեկադրված բացառության կարգով (տեղում հասցնելու համար ժամանակ քիչ էր մնում) նրանք մասնագիտական առարկաներից ընդունելության քննություններ կհանձնեն Երեւանի համապատասխան բուհերում: Առայժմ հիմնականում մայրաքաղաքից հրավիրված դասախոսներն էլ կդասավանդեն ակադեմիայում: Սակայն, ինչպես ասում են, ամեն բանի սկիզբն է դժվար...

Գ. Ս.

«Տեմպուս» ծրագրով միջազգային կոնֆերանս Գյումրիում

Սոցիալական աշխատանքի, դրա հետ կապված կրթական եւ գործնական հարցեր շոշափվեցին Երեւանից հետո Գյումրիում Միխայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, հուլիսի 5-6-ին տեղի ունեցած միջազգային երկօրյա կոնֆերանսում, որն անցկացվում էր «Տեմպուս» եվրոպական համատեղ ծրագրի շրջանակներում: Հիշեցնենք, որ սոցիալական աշխատողների այդ կրթական ծրագիրն իրականացվում է Լոնդոնի երկու համալսարանների, Մայնի Ֆրանկֆուրտի բարձրագույն տեխնիկական դպրոցի, Երեւանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի եւ Գյումրիի ու Վանաձորի մանկավարժական ինստիտուտների համագործակցությամբ: Կազմակերպիչների կողմից «Միջազգային-ամառային դպրոց» անվանված միջոցառմանը մասնակցեցին Գյումրիի բուհի դասախոսներ, ուսանողներ, սոցիալական ոլորտի աշխատողներ, տեղացի եւ արտասահմանցի մասնագետներ: Բացման խոսքում ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Սամվել Սարգսյանը, կարեւորելով սոցիալական աշխատանքի դերը մեր այսօրվա իրականության մեջ, տեղեկացրեց, որ հիշյալ ծրագրով մասնավորապես նախատեսված է համապատասխան մասնագետների պատրաստման նպատակով Գյումրիի մանկավարժական ինստիտուտում ստեղծել հեռակա ուսուցման կենտրոն: «Տեմպուս» կրթական ծրագրի համակարգող, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Ռոզ Ռահմանը նաեւ նշեց, թե ծրագրի հաջողության դեպքում Գյումրիում ու Վանաձորում առանձին ուսումնական կենտրոնների ստեղծումը մարդկանց թույլ կտա առանց Երեւան մեկնելու տեղում պատրաստվել եւ ստանալ սոցիալական աշխատողի որակավորման վկայական: Իսկ համապատասխան բիզնեսի խթանումը Գյումրիում կօգնի նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Երկօրյա կոնֆերանսի ընթացքում տարբեր խմբերով անցկացված տեսական ու գործնական դասընթացները, անհատական խորհրդատվությունները նվիրված էին կրթության կառավարմանն ու բիզնեսին, երեխաների իրավունքների պաշտպանությանը, նրանց խնամքին, սոցիալական աշխատանքի գործնական կառավարմանն ու զարգացմանը: Պարապմունքներ վարեցին Ռոզ Ռահմանը, արտասահմանից հրավիրված մի խումբ այլ փորձառու մասնագետներ:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ԹՇԵՔՎԱՆԴՈ

Իրանի հայազգի չեմպիոնը մարզում եւ մարզվում է Երեւանում

Վերջերս ծանոթացա իրանահայ թիեֆվանդոյիստ Վարդան Ղուռչյանի հետ: Բնականաբար հանդիպումը ուղեկցվեց զրույցով, որն էլ ներկայացնում եմ ստորեւ:

– Վարդան, որքա՞ն ժամանակ ես զբաղվում թիեֆվանդոյով:

– Ոչ միայն այս մարտաձեւով, այլեւ ընդհանրապես արեւելյան մարտաձեւերով հրաժարվել եմ 1985 թվից: Սկզբում պարապում էի ջիդոյով (Բրյուս Լիի ոճ) հոնկոնգցի մարզիչ Քու Քյամարի մոտ: Թիեֆվանդոյով սկսել եմ զբաղվել 87 թվից իրանահայ մարզիչ Ռուբեն Շահվերդյանի օգնությամբ:

– Եվ ի՞նչ տվեց քեզ թիեֆվանդոյով պարապելը:

– Թիեֆվանդոն աղահովում է անձի ներդաշնակ զարգացումը՝ հավասարակշռելով կարողություններից նկատմամբ, հարգանք մեծերի հանդեպ, սեր դեպի բնությունը, առողջություն:

– Ի՞նչ նվաճումներ ես ունեցել մարզական կյանքում:

– Իրանի չեմպիոն եմ դարձել 4-րդ քաշային կարգում (58-64 կգ): Նշեմ, որ այնտեղ մարզաձեւը շատ տարածված է: Մասնակցել եմ Թեհրանի առաջնությանը եւ հաղթող դարձել, պարտության մատնելով Ասիայի չեմպիոնին: Ներկայումս ունեմ սեւ գոտի, 3-րդ դան, թիեֆվանդոյի համաշխարհային ֆեդերացիայի անդամ եմ, համահայկական խաղերի չեմպիոն:

– Իրանում մարզվել ես հայկակա՞ն ակումբներում...

– Ոչ, իրանական, բեւեւ մրցումներին մասնակցել եմ հայկական ակումբների հավաքականից: Այնտեղ մի շատ ուժեղ ակումբներ կան «Ալարաս», «Բաֆֆի», «Սիփան», որոնք այնքան էլ հարգի չեն: Դրա պատճառն այն է, որ հայերի շրջանում մարզաձեւն այնքան էլ տարածված չէ: Ինչպես նշեցի, առաջին մարզիչս է եղել Ռուբեն Շահվերդյանը, որը Իրանի ռազմական գրականության հրատարակիչն է: Ի դեպ, նա որակավորվել է Կորեայում եւ սեւ գոտի, 6-րդ դանի տիրակալ է: Բացի այդ, նաեւ Իրանի թիեֆվանդոյի ֆեդերացիայի տեխնիկական կոմիտեի անդամ է:

– Թիեֆվանդոն ընդգրկվել է 2000 թվի օլիմպիական խաղերի ծրագրում: Կկարողանա՞ս հանդես գալ Սիդնեյում:

– Հնարավորության դեպքում անդայման կմասնակցեմ օլիմպիադա-2000-ին: Երազում եմ մրցապարեզ դուրս գալ Հայաստանի դրոշի ներքո:

– Դու նշեցիր, որ Իրանում թիեֆվանդոն բավականին տարածված է: Ի՞նչ մակարդակի է այն:

– Նախ նշեմ, որ մարզաձեւը պարտադիր մտցված է դպրոցների ուսումնական ծրագրում եւ ֆիզկուլտուրայի դասին ընդունված երկու մարզաձեւերից մեկը անդայման թիեֆվանդոն է: Պատահական չէ, որ այս մարզաձեւով զբաղվում է մոտ 6 մլն մարդ եւ միայն Թեհրանում գործում են շուրջ 990 ակումբներ: Այն տարածված է նաեւ բանակում: Իսկ ինստիտուտում մարզիչները մեկուկես տարի հատուկ դասընթաց են անցնում, որից կես տարին նվիրված է վնասվածքների դեպքում շտապ օգնության ցուցաբերմանը: Հատկանշական է, որ Իրանում կանայք եւ աղջիկներ եւս զբաղվում են թիեֆվանդոյով՝ տղամարդկանցից առանձին:

– Հայաստանում թիեֆվանդոյի տարածման ի՞նչ հեռանկարներ ես տեսնում:

– Թիեֆվանդոն Հայաստան է մուտք գործել համեմատաբար վերջերս: Լսել եմ, որ սկզբնական շրջանում մարզվողները որոշակի դժվարություններ են ունեցել: Իմ կարծիքով, վատ չի լինի, եթե այն ավելի մեծ տարածում ստանա, ուստի ցանվի դպրոցներում եւ բուհերում: Սա առավել եւս կարեւոր է, քանի որ Հայաստանը մշտապես կանգնած է պատերազմի վերսկսման վտանգի առջեւ:



– [illegible] ընտանիքում որեւէ մեկը եւս [illegible] է թիեֆվանդոյով:

– Այո... [illegible] Արամը, արդեն կարմիր գոտի է կրում: Ինչ մնում է եղբորս Անդրանիկին, նա նախընտրել է ֆուտբոլը:

– Գիտեմ, որ ցանկություն ունես սովորելու ԵՊՀ արեւելագիտական ֆակուլտետում: Ունպապայի ի՞նչ ծրագրեր ունես:

– Ավարտելուց հետո մտադիր եմ զբաղվել հրատարակչական գործ եւ հիմնել մի հանդես, որը նվիրված կլինի ընդհանրապես արեւելյան մարտարվեստներին: Ներկայումս փորձում եմ խմբեր հավաքել եւ մարզել: Թիեֆվանդո դպրոցներ ցանկացողներն ինձ կարող են զանգահարել 55-12-84 եւ 55-27-88 հեռախոսահամարներով: «Դինամո» մարզադպրոցի միջազգային բաժին:

Զրույցը վարեց
ՀՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ

Հոլանդիայի ջրագնդորդուհիները նվաճեցին աշխարհի գավաթը

Ֆրանսիայի Նանսի քաղաքում ավարտվեցին ջրագնդակի աշխարհի գավաթի խաղարկության մրցումները կանանց բիմների միջեւ: Ռուս մարզուհիներն ավելի քան երբեւէ մոտ էին հաջողության եզրափակիչ խաղում՝ Հոլանդիայի հավաքականի դեմ: Լարված հանդիպման ճակատագիրը վճռեց մեկ գնդակի առավելությունը, որն ի վնաս ռուսների էր: Հոլանդուհիները հաղթեցին 8-7 հաշվով եւ նվաճեցին գլխավոր մրցանակը: Երրորդ տեղի համար խաղում Ավստրալիայի հավաքականը 6-4 հաշվով պարտության մատնեց իտալուհիներին:

Օսլոյում տեղի է ունենում Մեծ մրցանակի «Բիսլեթ գեյմս» անունը կրող բեռնատարների մրցաշար: Հունիսի 4-ին այն նշանավորվեց նոր համաշխարհային ռեկորդով: Եթովպացի Հայլե Գեբրսելասին 10 հազար մետրը հաղթահարեց 26:31.32 վրկ-ում:

Սենսացիոն «Տուր դե Ֆրանսը»

«Տուր դե Ֆրանս» խոշորային բազմօրյա հեծանվավազքի 1-ին փուլում հաղթեց իտալացի Մարիո Չիպոլինին: Նա կարողացավ առաջինը հաղթահարել Ռուան եւ Պերժ Լեգո քաղաքների միջեւ 192 կմ մրցատարածությունը եւ ստացավ առաջատարի դեղին շապիկը: «Սուպեր Մարիոն» հերթական անգամ աղացուցեց վերջնագիծը հիանալի հաստատ ունակությունը: Նա լավագույնը դարձավ բելգիացի Տոմ Սիելսի եւ ֆրանսիացի Ֆրեդերիկ Մոնկասենի հետ մրցավեճում եւ տանեց «Տուր դե Ֆրանսի» փուլերում իր 5-րդ հաջողությունը: Նրանից 10 վրկ-ով ետ է մնում անգլիացի Քրիստֆեր Բորդմանը: Երրորդ դիրքում է գերմանացի Յան Ուլրիխը, որը առաջատարին զիջում է 12 վրկ:

Հարավսլավիան՝ Եվրոպայի չեմպիոն

Ավարտվեց նաեւ տղամարդկանց բասկետբոլի Եվրոպայի առաջնությունը: Կիսաեզրափակիչում Ռուսաստանի հավաքականը 65-67 հաշվով զիջեց իտալացիներին եւ երրորդ տեղի համար խաղում հանդիպելով հույներին՝ հաղթանակի հասավ 97-77 հաշվով ու նվաճեց բրոնզե մեդալներ: Վերջին 3 տարիներին 2-րդ անգամ աշխարհամասի չեմպիոնի ոսկե մեդալները նվաճեցին հարավսլավացի բասկետբոլիստները: Եզրափակիչում նրանք 61-49 հաշվով պարտության մատնեցին Իտալիայի հավաքականին:



ԹԵՆԻՍ

Ռեկորդը կրկնվեց 96 տարի անց

Վերջնագիծը հասավ թենիսի Ուիմբլդոնյան մրցաշարը: Տղամարդկանց մրցումների եզրափակիչում հանդիպեցին ամերիկացի Փիթ Սամփրասը եւ ֆրանսիացի Մեդրիկ Պիոլինը: Վիճակագրությունը, անկասկած, ամերիկացու կողմն էր՝ Սամփրասն աշխարհի թիվ 1 ռակետն է, նրա մրցակիցը՝ 44-րդը, վերջին 4 տարիներին Սամփրասը 3 անգամ շահել է Ուիմբլդոնը, Պիոլինի հետ անհաջող հանդիպումների հաշիվն է 7-0 հօգուտ ամերիկացու: Այս անգամ էլ պատկերը չփոխվեց: Սամփրասին 1,5 ժամից միայն ավելի պահանջվեց նվաճելու չեմպիոնի 10-րդ կոչումը «Մեծ սաղավարտի» մրցումներում: Սամփրասը 6-4, 6-2, 6-4 արդյունքով առավելության հասավ մրցակցի նկատմամբ եւ 4-րդ անգամ հռչակվեց Ուիմբլդոնի չեմպիոն:

Կանանց մրցաշարի եզրափակիչում շվեյցարուհի Մարտինա Հինգիսը 2-6, 6-3, 6-3 հաշվով հաղթեց չեխ մարզուհի Յանա Նովոտնային եւ հերթական պարգեւը նվաճեց այս մրցաշրջանում:

Պատմական իրադարձություն տեղի ունեցավ տղամարդկանց զուգախաղերի եզրափակիչում: Ավստրալիացիներ Թոդ Վուդբրիջը եւ Մարկ Վուդֆորդը 4 սեթերում հաղթեցին հոլանդացիներ Յակ Էլթինգին եւ Պոլ Խարհուսին ու 5-րդ անգամ անընդմեջ դարձան Ուիմբլդոնյան մրցաշարի հաղթողները: Նման բան հաջողվել է միայն Դոբերտի եղբայրներին 1901 թվին:

Գլխավոր մրցանակի վիճարկումը՝ ռուս թիեֆվանդոյիստների մենաշնորհ

Ռուսաստանի առաջին հավաքականը հաղթող դարձավ թիեֆվանդոյի աշխարհի թիմային առաջնությունում, որն անցկացվեց Սանկտ Պետերբուրգում: Եզրափակիչում այն անհասանելի առավելությամբ պարտության մատնեց երկրի երկրորդ թիմին: Երրորդ տեղը կիսեցին Գերմանիայի եւ Արգենտինայի հավաքականները: Ընդհանուր առմամբ, հոբելյանական 10-րդ առաջնությունում մեդալներ նվաճեցին 26 երկրների ներկայացուցիչներ, բոլորից շատ՝ Հարավային Կորեայի մարզիկները՝ 20, որից 13-ը՝ ոսկե: 10-ական մեդալներ իրենց երկրին բերեցին լեհերը, որից 2-ը՝ ոսկե, նույնքան բարձրակարգ պարգեւներ ունեն նաեւ ռուսները, որոնք նվաճեցին եւս 3 արծաթե եւ 3 բրոնզե մեդալներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը դիմումներ է ընդունում մագիստրոսի գիտական կոչում շնորհող համալսարանական եւ միջանկյալ աստիճանի իրավունքի երկամյա ծրագրի համար: Լիցենզավորված ոչ պետական բուհերի շրջանավարտները կարող են դիմել դայմանականորեն, գրավոր դայմաններով ձեռք բերելու համար խնդրվում է դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Ծրագիրը համեմատական սկզբունքով կուսումնասիրի եվրոպական քաղաքացիական իրավունքի եւ անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները եւ կունենա երկու ուղղվածություն: Համեմատական սահմանադրական իրավունքի առարկաները կընդգրկեն սահմանադրականության, իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության եւ անհատի իրավունքների հիմնահարցերը, ինչպես նաեւ միջազգային համաձայնագրերին եւ դայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը: Միջազգային գործարարության իրավունքի շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանրային իրավունքի եւ միջազգային գործարքների հիմնական դրույթները, դայմանագրային հարաբերությունները, միջազգային աղրանքային առեւտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը եւ վեճերի լուծման մեթոդները: Համեմատական եւ միջազգային առեւտրային իրավունք ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողներին օժանդակել իրենց երկրի ա) քաղաքականության մշակման եւ օրենսդրական գործընթացների եւ բ) զարգացող շուկայական տնտեսության իրավական հիմքերի ստեղծմանը:

Դիմորդները դետք է ունենան իրավաբանական բարձրագույն կրթություն եւ անգլերեն լեզվի մասնակի իմացություն: Դիմորդները դետք է ներկայացնեն դիպլոմ եւ ներդիր իրենց դատճեններով, երեք երաշխավորագիր նամակ, լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների ճշտին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման կանխավճարը կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք դրամ, որը դետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: 1997 թ. հուլիսի 23-ը փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է:

Բոլոր դիմորդները 1997 թ. հուլիսի 23-ին կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 եւ ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության դահանջված մակարդակը, կմասնակցեն 1997 թ. սեպտեմբերից մինչեւ 1998 թ. ապրիլի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի արագացված ծրագրին: Անգլերեն լեզվի արագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 300 դոլարին համարժեք դրամ: Նախնական ծրագիր ընդունվելը՝ 1997 թ. հուլիսի վերջին, որոշ դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմորդների անունները եւ հարցազրույցների օրերը կփակցվեն ՀԱՀ-ում:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի եւ նախադասարասական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության հիման վրա: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները դետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին դայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցեն՝ Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոս՝ 27-16-29:

ՀԱՀ-Ը ԱՍՍՏԱՏԿՈՒՄ, ԿՐՈՆԱԿՈՒՄ, ՍԵՌՈՒՅԻՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ:

Հայաստանի ամերիկյան համալսարան
հատուկ դասընթացների բաժին

Սեմինար դասավորների համար

USAID կազմակերպության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում Հայաստանի ամերիկյան համալսարանում դասավորների համար կազմակերպվելու է քաղաքացիական իրավունքի խնդիրների վերաբերյալ սեմինար: Այդ սեմինարի ընթացքում կքննարկվեն՝

– ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նախագիծը, սնանկության, գրավի, անշարժ գույքի վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրությունը

– Տնտեսական վեճերի լուծման ընթացակարգը եւ դրա առանձնահատկությունները

– Դասական էթիկայի, դատարաններում աշխատանքի կազմակերպման հարցերը եւ մի շարք այլ խնդիրներ

■ Սեմինարի ժամանակ ելույթ կունենան ԱՄՆ-ից հրավիրված մասնագետներ, հայ իրավաբան գիտնականներ եւ պրակտիկ աշխատողներ:

■ Սեմինարի օրերն են՝ հուլիսի 10-ին ժամը 14:00–18:00, հուլիսի 11-ին եւ 12-ին ժամը 9:30–17:00, հուլիսի 17-ին ժամը 14:00–18:00, հուլիսի 18-ին եւ 19-ին ժամը 9:30–17:00:

■ Սեմինարը տեղի կունենա Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) փոքր դահլիճում:

■ Սեմինարը կընթանա անգլերեն եւ հայերեն լեզուներով՝ համաժամանակյա թարգմանությամբ:

■ Հրավիրվում են ՀՀ դատավորները եւ դատավորների պաշտոնական պիտանիության ցուցակի մեջ ընդգրկված անձինք:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժին

Սեմինար իրավաբանների համար

USAID կազմակերպության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում Հայաստանի ամերիկյան համալսարանում իրավաբանների համար կազմակերպվելու է քաղաքացիական իրավունքի խնդիրների վերաբերյալ սեմինար: Այդ սեմինարի ընթացքում կքննարկվեն՝

– ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նախագիծը, հարկային, բանկային եւ մախային ոլորտի օրենսդրությունը

– սնանկության, գրավի, անշարժ գույքի իրավական կարգավորման խնդիրները

– մասնավոր իրավաբանական ֆիրմայի ստեղծման եւ գործունեության հետ կապված հարցերը եւ մի շարք այլ պրոբլեմներ

■ Սեմինարի ժամանակ ելույթ կունենան ԱՄՆ-ից հրավիրված մասնագետներ, հայ իրավաբան գիտնականներ եւ պրակտիկ աշխատողներ

■ Սեմինարը կսկսվի հուլիսի 7-ին եւ կշարունակվի հուլիսի 8-ին, 9-ին, 14-ին, 15-ին եւ 16-ին, ժամը՝ 13:00–19:00, Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) փոքր դահլիճում

■ Սեմինարը կընթանա անգլերեն եւ հայերեն՝ համաժամանակյա թարգմանությամբ

■ Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 27-16-58

Robin Generators **RGX3500**

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ: ☎ 529353

հզորություն	մաքս. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	տարող.
50 Հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 Հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	



ՀԱՏԸՆՏԻՐ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՇԱՆԵԼԻՔ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԲՈՒՐՄՈՒՆՔՈՎ

☎ 584061

ժ. 9-12-ը եւ 20-22-ը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի «ՄԱՇՏՈՑ» նորաստեղծ տարրական մասնավոր դպրոցը հայտարարում է 1997-98 ուսարվա ընդունելություն 1-10-րդ դասարաններում, որոնցում ներգրավվում են մինչեւ 10 աշակերտ: Դպրոցն ապահովում է իր շրջանավարտների՝ հանրակրթության ցանկացած բուհ-ի ընդունելության համար անհրաժեշտ գիտելիքներ: Ուսուցումը տեւելու է 10 ամիս: Դպրոցը ապահովված է ջեռուցմամբ:

✉ Բյուզանդի 107, ☎ 538332

ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ անվան մրցանակը շնորհվեց ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻՆ

«Հայ գրականության բարեկամներ» միությունը սահմանել է Հակոբ Օշականի անվան մրցանակ, որը կտրվի գրականության մեջ նոր ուղի բացող հայ գրողներին: Մրցանակին առաջինն արժանացել է արձակագիր Գուրգեն Խանջյանը՝ «Շարժասանդուղ» եւ «Հիվանդանոց» գրքերի համար:

ՀԳԲ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ @ ՀԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (ՀԱՀ) ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ (ԱԴՈՕԼ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՇՆՈՐՀՈՂ ԾՐԱԳԻՐԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՁԵԶ ԴԻՄԵԼՈՒ 1997-98 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ, որը սկսվում է սեպտեմբերին

ԱԴՈՕԼ վկայական շնորհող միամյա ծրագիրը նախատեսված է անգլերենը որպես երկրորդ լեզու դասավանդող ուսուցիչների համար

ԲՈԼՈՐ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՉ Է ԱՐՎՈՒՄ ԴԻՄԵԼ: ԱՆԳԼԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ 1997 Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-ԻՆ, ՀԱՀ-ՈՒՄ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ
Ընդունելության գրասենյակ՝ 27-16-29,
ԱԴՈՕԼ ծրագրի գրասենյակ՝ 27-08-89 կամ
այցելել ՀԱՀ, Մարշալ Բաղրամյան 40, Երեւան

Ֆինանսական օժանդակության մասին տեղեկությունների համար դիմել ՀԱՀ-ի անգլերենի բաժին, 37 սենյակ

ԴԻՄՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՏԸ *1997 թ. հուլիսի 23-ն է*

ԴԻՄԵ՛Ք ԱՅԺՄ, ՄԻ՛ ՀԵՏԱՁԳԵՔ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 10-ին ժամը 15-ին, գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա ցերեկույթ նվիրված արձակագիր, բանաստեղծ
ՎԱՀԱԳՆ ՄՈՒՂՆԵՑՅԱՆԻ
ծննդյան 50-ամյակին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԼԼԱԹ» ԲԱՆԿԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԾԵՐԳՐՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ՌԵԶԻԴԵՆՏ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԵԶ ՄՈՏ ՈՒՆԵՆԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՄԵԼԼԱԹ» ԲԱՆԿՈՒՄ

- Ձեր հաշվի ակտիվ շարժը Ձեր նկատմամբ ունեցած բանկի վստահության ամրապնդումն է հետագա աշխատանքների համար:
- Դուք կարող եք Ձեր հաշվից ստանալ կանխիկ, ոչ կանխիկ, ցանկացած քանակությամբ գումար, ցանկացած ժամանակ, առանց որեւէ սահմանափակման:
- Փոխանցումներ ՀՀ ցանկացած բանկ եւ ցանկացած քաղաք՝ անվճար:
- Ձեր պատվերով կկատարվեն կոմունալ ծախսերի, կենսաթոշակային եւ բյուջեի վճարումներ, պարբերաբար փոխանցումներ:
- Ձեր հաշվից կկատարվեն կանխիկ վճարումներ Ձեր կողմից վստահված անձանց:

❑ «ՄԵԼԼԱԹ» ԲԱՆԿԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՁԵՐ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ:
❑ ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԲԱՑԵԼ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՇԻՎՆԵՐ:
❑ «ՄԵԼԼԱԹ» ԲԱՆԿԸ ՁԵՐ ԲԱՆԿՆ Է:

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ 1

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ – ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ: 589167, 581351.

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեն 614. Տպախմբագիր՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 7.07.1997. Գինը՝ 100 դրամ